

DOI: 10.57192/18291864-2023.1-80

Դավիթ Վ. Գասպարյան

Բանասիր. գիյր. դոկտոր

**ԵՂԻՇԵ ՉԱՐԵՆՑԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ԱՌԱՋԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԻՆԵՐԻՆ՝***

Բանալի բառեր – Նիկոլ Աղբալյան, Արմենուհի Տիգրանյան, Կարս, «Սոմա», «Ամբոխները խելագարված», ռադիոպոեմներ:

Մուտք

Ռուսական հեղափոխություն, Կովկասյան ճակատի փլուզում, Հայաստանի առաջին հանրապետություն՝ պատմաքաղաքական այս բարդ իրադարձությունների պայմաններում ինչպե՞ս դասավորվեցին Չարենցի կյանքն ու գործունեությունը:

1917 թ. փետրվարյան դեպքերի առնչությամբ Չարենցը գրում էր. «1917 թ. փետրվարին եղել եմ Մոսկվայում: Շանյավսկու համալսարանի ուսանողների խմբում մասնակցել եմ Բուստրյան բանտից քաղբանտարկյալների ազատմանը: 1917 թ. հոկտեմբերը դիմավորել եմ Կարսում <...>՝ Տաճկահայաստանից ետ գրավված նահանջող զորքերի վերահսկողության գոտում»¹:

Չարենցն ընդունեց նաև պատմական իրադարձությունների հոկտեմբերյան ալիքը: Շարունակելով մնալ իր երկրի նվիրյալ որդին՝ նա ոգևորվեց հեղափոխության բերած գաղափարախոսությամբ: Հեղափոխությունից հետո ամեն ինչ պատմական տեղաշարժերի մեջ էր: Չարենցի այս շրջադարձին նպաստեց ոչ միայն իր երկրի պատմական բախտի որոնումը, այլև իրեն ոգևորող ապագայապաշտների (ֆուտուրիստների) անցումը հեղափոխության կողմը:

* Հոդվածն ընդունվել է տպագրության 08.03.2023:
1 **Չարենց Ե.**, Գիրք մնացորդաց, Եր., «Տիգրան Մեծ», 2017, էջ 305:

Պետերբուրգում ապագայապաշտները 1917 թ. հոկտեմբերի 25-ը, այսինքն՝ Հոկտեմբերյան հեղափոխությունը, ընդունում են միանգամից և գրկաբաց: Հեղափոխության առաջին իսկ օրերին բանաստեղծներ Վլադիմիր Մայակովսկին, Վասիլի Կամենսկին, Դավիթ Բուրյուկն ու Ալեքսեյ Կրուչենիխը թռուցիկներ են փակցնում Մոսկվայի պատերին «Հրամանագիր ցանկապատային գրականության, փողոցների նկարագարման, երաժշտական պատշգամբների ու արվեստների տոնախմբության մասին»: Միաժամանակ հրահանգում էին բանաստեղծության ձևով պատերին սոսնձել կյանք-ձյնարտությունը: Այս ամենը թափանցում էր նաև հայ իրականություն²: Այսպես արվեստը հանում են փողոց, հանրահավաքներում ընթերցում իրենց բանաստեղծությունները: Կամենսկու գլխավորությամբ հիմնվում է Բանաստեղծների համառուսաստանյան միությունը, որի կազմում ընդգրկվում են 80 բանաստեղծ և 17 խմբակցություն: Հեղափոխության սկզբում՝ մինչև պրոլետկուլտի կազմավորումը, գրական անդաստանում իշխում էին ապագայապաշտները և փողոցից ու բոհեմից թափանցում պալատներ:

Քաղաքական ու գրական այս ազդակների մեջ Չարենցը ձշտում էր իր կողմնորոշումը: Մինչ այդ՝ 1917 թ. հուլիսին, նա Կարսում էր: Տեղի էին ունենում այնպիսի իրադարձություններ, որոնք հետագայում իրենց գեղարվեստական անդրադարձը պետք է գտնեին «Երկիր Նայիրի» վեպում: Ուրվագծվում էր միջավայրը, հասունանում էին հերոսների կերպարները, առաջին հերթին՝ Կարսի քաղաքագլուխ Համազասպ Նոհրատյանի (Մագուրի Համո):

Հավատարիմ իր հայրենասիրական համոզմունքներին՝ 1917 թ. դեկտեմբերից մինչև 1918 թ. փետրվարի կեսերը Չարենցը՝ որպես զինվոր, ծառայում է Էրզրումում: Հայրենիքը նրա համար ոչ միայն ոգեշունչ կապուտաչյա բանաստեղծություն էր, այլև պատասխանատվություն զինվորական գործին. 1915 թ. կամավորությունից հետո նա նորից գենքը ձեռքին հայրենիքի դիրքերում էր:

Հայրենիքի փրկության համար ոտքի են կանգնում ազգի որդիները, այդ թվում՝ Անդրանիկը, ով Թումանյանի բարենաղթանքներով փետրվարի 9-ին իր կամավորներով դուրս է գալիս Թիֆլիսից և փետրվարի 16-ին արդեն Կարսում էր: Այս ամենը խորապես անդ-

2 Տե՛ս **Գասպարյան Ռ.**, Հայկական ապագայապաշտություն, Եր., «Ձանգակ», 2009, էջ 35-56:

րադառնում է Չարենցի ճակատագրի վրա և արտացոլվում այդ ժամանակաշրջանին վերաբերող նրա բազմաթիվ երկերում՝ «Ազգային երազ», «Հատված» և «Խմբապետ Շավարշը» պոեմներում, «Երկիր Նայիրի» վեպում, «Հարդագողի ճամփորդները», «Մարիոնետկա» և «Մահվան տեսիլ» բանաստեղծություններում, «Ողջակիզվող կրակ» շարքում:

Մինչ այս, մինչ այն ՌԽՖՍՀ-ի և կենտրոնական ուժերի միջև կնքված Բրեստ-Լիտովսկի հաշտության պայմանագիրը (3 մարտի 1918 թ.) կործանարար հետևանքներ է ունենում հայ ժողովրդի համար: 4-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ պարբերություններով բոլշևիկները պարտավորվում էին թուրքերին վերադարձնել թե՛ պատերազմում գրաված Արևմտյան Հայաստանի տարածքները, թե՛ 1878 թվականից ինքնակալությանն անցած Արդահանը, Կարսը և Բաթումը: Բրեստ-Լիտովսկի հաշտության պայմանագրից հետո քանդվեց Արևմտյան Հայաստանը՝ Երզնկան, Ալաշկերտը, Վանը, և ժողովուրդը հոսեց դեպի Կովկաս ու Ռուսաստան. երկիրը դատարկվեց իր տոհմիկ բնակչությունից:

1918 թ. ապրիլին թուրքերը մտնում են Կարս: Չարենցը Թիֆլիսում էր: Ահա Թիֆլիսում էլ 1918 թ. մայիսի 28-ին Հայոց ազգային խորհուրդը որոշում է ընդունում Հայաստանի անկախության հռչակման մասին: 1919 թ. դեկտեմբերի 26-ին հայերենը հռչակվում է պետական լեզու: Երկիրը քայլ առ քայլ կազմակերպվում էր ու կայանում:

1. Չարենցի գործունեության նոր փուլը. «Սոմա (Նոր վեդյան պոեմ)»

1918 թ. հունիս-հուլիս ամիսներին Չարենցը Ցարիցինում կարմիր զորքի շարքերում էր: Այդ ամիսներին Հյուսիսային Կովկասում գրում է «Սոմա (Նոր վեդյան պոեմը)»³, իսկ հուլիսից հետո՝ «Ամբոխները խելագարված» պոեմը: Ըստ Խ. Սարգսյանի՝ պոեմի ներշնչանքի աղբյուրը Օվսյանիկո-Կուլիկովսկու «Վեդաիզմի հիմունքները» (1909) հոդվածն է⁴:

3 Տպագրվել է Թիֆլիսում 1918 թ. դեկտեմբերին: Թվագրված և տեղագրված է՝ 1918 թ., հունիս-հուլիս, Ցարիցին, տպարան՝ «Պրոգրես»: Գինը 3 ռուբլի: ԳԱԹ ՉՖ-ում պահվող թիվ 2 ինքնագիրը թվագրված է՝ 1918 թ. դեկտ. 7-8, Թիֆլիս:

4 Տե՛ս **Գասպարյան Ղ.**, Եղիշե Չարենցի կյանքն ու ժամանակը, Եր., «Տիգրան Մեծ», 2022, էջ 67-68:

Ընդհանրությունն չկա՝ արդյոք Ալ. Բլոկի՝ այդ տարիներին լայն տարածում գտած «Տասներկուսը» (1917) պոեմի Քրիստոսի և Չարենցի Սոմայի կերպարների միջև. Քրիստոսն արյունոտ դրոշակով է առաջնորդում հեղափոխության տասներկու առաքյալներին, Սոման՝ կարմիր հրդեհներով...

«Սոմա»-ն նաև հայոց պետականության վերականգնման անդրադարձն է: Եթե հայրենիքի որոնում չեն, ապա ինչի՞ մասին են հետևյալ տողերը.

**Դարեր շարունակ, անվերջ, անդադրում,
Ու սիրտս – գարուն,
Կյանքս երգ շինած՝ քե՛զ էի փնտրում
Այս չար աշխարհում⁵:**

Սոման՝ և՛ որպես հնդկական դիցաբանության գլխավոր աստվածներից մեկը, և՛ որպես արբեցնող «սրբազան խմիչք», «սրբազան սեր», այս դեպքում ոչ այլ ինչ է, եթե ոչ հայրենիքի ոգու մարմնավորում: Այդ են հուշում հաջորդ տողերը.

**Բայց ես գիտեի, որ մեռնում է նա,
Ով որ քեզ սիրե: // <...>
Բայց տեսա հանկարծ քո դեմքը վերջին
Այս աղջամուղջում:
Քո դեմքը տեսա, որպես սրբազան
Մի զոհաբերում,
Քո դեմքը տեսա աշխարհասասան
Այս հրդեհներում⁶:**

Սա հենց հայրենիքի դեմքն է: Ինչո՞ւ է օրհնում «Վայրկյանը կարմիր աշխարհում այս չար». մի կողմից՝ հեղափոխություն, մյուս կողմից՝ ազգային գոյավիճակ: Դարեր շարունակ մխացող սպասման պահը վերարժարծվում է հաջորդաբար: Նույնն են ասում նաև գիշերվա թանձր մթում գերեզմանից դուրս թռչող հրե սրի, երկուն-

5 **Չարենց Ե.**, Երկերի ժողովածու, հատ. 2, Եր., ԳԱ հրատ., 1963, էջ 71:

6 Նույն տեղում:

քի ու մահվան պատկերները: Եվ մի՞թե ճակատագրական պահին համայն հայությանն ուղղված կոչ չեն հետևյալ խոսքերը.

**Հե՛յ, հեռավոր ընկերներ ու եղբայրներ,-
Դուք չե՛ք լսում. ձե՛զ ենք կանչում,-
Զվարթ ու սեզ,
Եկե՛ք, մտե՛ք շուրջպարը մեր-
Եկե՛ք, եկե՛ք**⁷:

Նույնն է 8-րդ գլուխը. «Ու գալիս են անվե՛րջ, անվե՛րջ // Ամբոխները ահագին...»⁸: Նույնն են և եզրափակիչ տողերը. «Կյանքս կմարի՝ հին, չնչին մի կայծ // Քո ոսկի հրում- // Բայց վառվի՛ պիտի սիրոսս մոխրացած // Քո բուռ՛ր գալիք արշալույսներում»⁹:

«Նոր վեդյան պոեմ» ծանուցման կապակցությամբ ավելացնենք, որ այդ տարիներին վեդայական անդրադարձներն ակնհայտ էին հայ գրականության մեջ: Վեդայական ավանդույթների բարձրագույն սուրբ գիրքը՝ «Բհագավադ-գիտա՛ կամ Երանելու երգը», Հրաչյա Աճառյանի թարգմանությամբ լույս է տեսել 1911 թ. Էջմիածնում: Կրիշնաիգմի դավանած հոգու հավիտենության, կյանքի անցավոր ձևերի մեջ հոգու՝ ինքն իրեն վերագտնելու և վերամարմնավորվելու տեսանկյունից են դիտվում Հովհաննես Թումանյանի «Դեպի անհունը» պոեմը, «Հազար տարով, հազար դարով առաջ թե ետ, ի՛նչ կա որ...» և «Տիեզերքում աստվածային մի ճամփորդ է իմ հոգին» քառյակները: Հիշենք Ռուբեն Սևակի «Մաքիա Մունի» օրհներգը, Իսահակյանի «Անանդան և մահը» և այլն: Վերջապես, այս փիլիսոփայությամբ է բացահայտվում Չարենցի «Մարի, է՛գ թռչուն» բալլադը՝ գրված 1916 թ.:

Գաղափարական այս համատեքստում ասույթի սեղմություն ունեն «Ծիածանը» ժողովածուի առաջին իսկ բանաստեղծությունները՝ «Ես աստղային մի պոետ, Լաբիրինթոսում քո կապույտ, // Քո՛ւյր, անցնում եմ որպես աստղ, հոգիս – մեռած աստղի փայլ...», «Հոգին չի մեռնում: Մարմինը թողած երկրային փոսում- // Թափառում է նա տիեզերական Լաբիրինթոսում»¹⁰:

7 Նույն տեղում, էջ 77:

8 Նույն տեղում, էջ 78:

9 Նույն տեղում, էջ 79: Ավելացնենք, որ «Երկերի ժողովածու»-ում (հատ. 2, Մոսկվա, 1922) պոեմը Չարենցը բերնաթափել ու վերախմբագրել է:

10 **Չարենց Ե.**, Երկերի ժողովածու, հատ. 1, Եր., ԳԱ հրատ., 1968, էջ 67-68:

գեղարվեստական ինքնարտահայտման որոշակի միջոց և աստիճանաբար հաստատվում որպես ինքնուրույն ժանր:

1918 թ. Թիֆլիսում լույս է տեսնում Սերգեյ Գորոդեցկու «Հայաստանի հրեշտակը» բանաստեղծությունների ժողովածուն: Այն բացվում է Թումանյանին նվիրված ուղերձով և նրան ձոնված «Հայաստանին» քերթվածով: Արևմտյան Հայաստանին, հատկապես Վանին, Գորոդեցկին նվիրել է ակնարկներ: Նրա «Ուրվականների քաղաքը» (1917) ակնարկն ասես Չարենցի «Դանթեական առասպելի» անդրադարձը լինի. «Վանը գերեզման է: Վանը անծայրածիր գերեզմանոց է: Մեռյալների քաղաք է սա: Եկեք միասին մտնենք Վան... Խորաբաց, անկերպարան խոռոչներ պատուհանների ու դռների տեղ: Օդում՝ խանձահոտ ու նեխահոտ: Եվ հանկարծ՝ ահռելի քաղցած շան ոռնոց: Բզիկ-բզիկ մազերով վայրենացած կատու: Եվ նորից՝ փլատակներ, մոխրակույտեր, ածխացած պատեր՝ անվերջ, անխնայ: <...>: Վանի գեղջուկներից պիտի սովորել վայելուչ ապրելակերպ և գեղեցիկ կենցաղավարություն»¹³: Իսկ ավերակված դրախտի խորհրդանիշը գիրացած ագռավներն են: Այսպե՛ս եղավ, որովհետև ռուսներին Վանը պետք էր առանց հայերի, քանզի մտադիր էին այնտեղ վերաբնակեցնել կազակների¹⁴:

2. «Ամբոխները խելագարված» պոեմը

Երկրի համար ծանր այդ օրերին հանրապետության ղեկավարությունն ամեն ինչ անում էր գրական-մշակութային կյանքը հունի մեջ դնելու համար: 1919 թ. հունվարի 1-ին Սիմոն Վրացյանի խմբագրությամբ լույս է տեսնում «Հայաստանի կոռպերացիա» երկշաբաթաթերթի 1-ին համարը, որն ուներ բնաբան՝ «Միությունը ուժ է»: 1920 թվականից խմբագրին փոխարինում է խմբագրական կոլեգիան, գրական բաժնի վարիչը Դավիթ Անանուն էր: Չարենցի շատ գործեր տպագրվել են այս թերթում, իսկ Չարենց-Անանուն համագործակցության շրջանակը բավականին լայն էր:

1919 թ. հունվարի 3-ին թերթերը տարածում են պաշտոնական հաղորդագրություն. «Դաշնակիցները վերջնագիր են ներկայացրել

13 Գորոդեցկի Ա., Հայաստանի և հայ կուլտուրայի մասին, Եր., «Հայաստան», 1980, էջ 75-76:

14 Տե՛ս Մնացականյան Ա., Հայ ժողովրդի ողբերգությունը ռուս և համաշխարհային մտքի գնահատմամբ, Եր., «Հայաստան», 1965, էջ 66-70:

օսմանյան կառավարությանը՝ պահանջելով անմիջապես դատարկել Կարսը և թուրք զորքերը հեռացնել մինչև 1914 թ. սահմանը: Թուրքերը ոչինչ իրավունք չունեն Կարսից տանելու, բացի իրենց բերածից: Դաշնակիցների պահանջով թուրքերը պարտավորվել են շուտով Կարսը հանձնել հայերին, նրա հետ և երկաթուղային բոլոր շոգեքարշերն ու վագոնները»¹⁵: Հեռանալուց առաջ թուրքերը թալանում են Կարսը, ինչ հնարավոր է, տանում են, ինչ հնարավոր չէ, այրում: Քաղաքի և գյուղերի հայ գաղթականությունը փորձում է վերահաստատվել նախկին բնակավայրերում: Ժողովուրդը մատնված էր սովի, մոլեգնում էին վարակիչ հիվանդությունները: Երկիրը դարձել էր մահվան հովիտ:

1919 թ. փետրվար-մարտ, 1920 թ. հուլիս ամիսներին Թիֆլիսում-Հյուսիսային Կովկասում-Կարսում-Երևանում Չարենցը գրում է «Ողջակիզվող կրակ» շարքը կազմող երեք ենթաշարքերը՝ «Իրիկուն», «Վերադարձ», «Առավոտ»¹⁶: Այդ կապակցությամբ գրում է. «Ովքեր կարդացել են իմ «Ողջակիզվող կրակ» բանաստեղծությունների շարքը, նրանք գիտեն, որ այդ ժամանակ ես հեղափոխությունն ապրում էի որպես մի ռոմանտիկական-հուզական բռնկման պրոցես, որի սկիզբը դրված է 1918 թ. տպված իմ «Մոմա» պոեմում: <...>: Ամբողջ «Ողջակիզվող կրակ» շարքը գրված է մինևույն սիմվոլներով <...>, ամենուրեք հեղափոխությունը պատկերացված է որպես «Կրակի դուստր»»¹⁷:

1919 թ. ապրիլի 12-ին Կարսը, որ 1918 թ. ապրիլի 25-ից անցել էր Թուրքիային, անցնում է հայոց վերահսկողության ներքո: Սակայն Կարսն առաջվանը չէր. քաղաքով անցել էին թուրքերը, ինչ հնարավոր էր, տարել էին, ինչ հնարավոր չէր, այրել ու ավերել: Հեռացած ազգաբնակչությունը բռնում է վերադարձի ճանապարհը: Հայրենի քաղաքի ազատագրմամբ ոգևորված՝ 1919 թ. ապրիլին Չարենցը Թիֆլիսում տպագրում է «Ամբոխները խելագարված» պոեմը: Այստեղ թե՛ հեղափոխությունն է, թե՛ հայոց պետականության վերականգնման ավետիսը՝ Մարդարապատի հերոսամարտով հանդերձ: Անդրադարձը «Չարենց-նամե»-ում է.

15 «Ժողովուրդ», Եր., 1919, 3 յունուարի, N 1:

16 Ամբողջությամբ տպագրվել է «Երկերի ժողովածուի» 1-ին հատորում (Մոսկվա, 1922):

17 **Չարենց Ե.**, Երկերի ժողովածու, հատ. 6, Եր., ԳԱ հրատ., 1968, էջ 201:

Տասնրութ:
ԹՎական հրի:
Ողջակեզ – կարմրակեզ բոցում:
Արթնացավ արև՝ Նայիրին
Իմ հոգու նո՛ր գնագոցում:
Հրդեհ էր:
Անհատնում կրակ:
Արնաքամ վերքեր կարեվեր:
Ու կարոտդ հանկարծ ավվան –
Ողջակեզ հոգիս արևեց՝¹⁸:

Ե՛վ «Սումա», և՛ «Ամբոխները խելագարված» քնարական պոեմները հայոց պետականության վերականգնման օրհներգ են՝ փարած հեղափոխության արշալույսին: Սարդարապատի ճակատամարտը տեղի է ունեցել երկաթուղու կայարանում: Չարենցի պոեմի գլխավոր խորհրդանշանը դարձյալ երկաթուղու կայարանն է, որ ոտքի ելած ուժերը պետք է գրավեին: Սարդարապատում ժողովրդական ցատունն իրոք հասել էր խելագարության աստիճանի, որովհետև հայությունը բոլորեքյան շրջապատված էր հակառակորդի ուժերով. փրկությունը միայն միաբանված ու ինքնամոռաց կոիվն էր: Նաև երգ կար կովոդների շուրթերին. ժողովուրդը հայրենասիրական երգերով էր գնում կովի: Պոեմի 8-րդ մասում երգի ձայնը նմանեցվում է զանգի. «...զանգ էր կարծես ձայնը նրա»: Հիշենք՝ Սարդարապատի ճակատամարտի ժամանակ հնչում էին Մայր տաճարի ու մյուս եկեղեցիների զանգերը. «Ճակատի զինվորը չէր միայն – ամբողջ երկիրը մի մարդ, մի շունչ դարձած՝ կովում էր թշնամու դեմ՝ ազատություն կամ մահ վճռական կամքով»¹⁹: Մայիսի 24-ին թուրքերը դիմում են փախուստի, որը շարունակվում է մինչև մայիսի 28-ը: Կոչերն ուղեկցվում էին հաղթական կանչերով ու երգերով: Այս ոգեշունչ ուժը նաև «Ամբոխները խելագարված» պոեմում է, ուստի այն ևս հայոց պետականության վերականգնման օրհներգ է՝ ընդհանուր հեղափոխական տարերքի բարձր ոգևորությամբ²⁰:

18 **Չարենց Ե.**, Երկերի ժողովածու, հատ. 2, էջ 166-167:

19 **Վրացյան Ա.**, Հայաստանի Հանրապետություն, Թեհրան, 1982, էջ 140:

20 Մանրամասն տես **Գասպարյան Ղ.**, 1918-1920 թթ. պատմական իրադարձությունները և դրանց անդրադարձը ժամանակի հայ գրականության մեջ, «Քրիստոնյա Հայաստան», Էջմիածին, 1918, մայիս: Տես նաև Ա. Ազոզյանի հոդվածը («Գարուն», Եր., 1968, N 9, էջ 62-64):

3. Գրական-մշակութային կյանքը

1919 թ. փետրվարի 19-ին համայն հայությունը նշում էր Հովհաննես Թումանյանի ծննդյան 50-ամյակը: Թումանյանի անունը դառնում է ազգը միավորող հոգևոր կամուրջ, ով նաև իրենով է վկայում «մեր ազգային ոգու անպարտելի հզորությունը»: Հայ ազգի համար բոլոր առումներով շատ ծանր այդ օրերին նա նորից ու նորից հաստատում է Ամենայն հայոց բանաստեղծի իր վեհ կոչումը: Նա ոչ միայն բանաստեղծ էր, այլև ազգային, քաղաքական ու հանրային գործիչ, հաշտարար ու ժողովրդական դիվանագետ: Փետրվարի 16-ին Թիֆլիսի արտիստական թատրոնը բեմադրում է Արմեն Տիգրանյանի «Անուշը»: Կովկասի հայ, ռուս, նաև վրաց մամուլը հեղեղված էր Թումանյանին նվիրված հոդվածներով, հուշերով, լուսանկարներով ու բանաստեղծություններով, հանդես էին գալիս գրեթե բոլոր երևելի դեմքերը: Թումանյանը հռչակվում է Կովկասի բանաստեղծ:

Չարենցն այս միջավայրում էր, և որպես բացառիկ օրինակ նրա առաջ էր հայրենական հանճարի լինելության կերպը, որին դեռ պիտի հասներ...

Թումանյանի ծննդյան 50-ամյակի առթիվ լույս է տեսնում «Գրական-գեղարվեստական ակմանախի» 5-րդ համարը (Թիֆլիս, 1919): «Հայ գրականության վիճակը» խորագրի ներքո ներկայացված է Զորյանի հարցազրույցը Շիրվանզադեի, Թումանյանի, Նար-Դոսի, Վրթանես Փափազյանի, Տիգրան Հովհաննիսյանի, Դերենիկ Դեմիրձյանի, Դավիթ Անանունի և Հարություն Սուրխաթյանի հետ:

Թումանյան. «Մինչև այժմ մեր գրականությունը հարազատ հող չի ունեցել իր ոտի տակ, մեծ մասով գաղութային գրականություն է եղել: Բանաստեղծի ոտը հարազատ ու իրական հողի վրա պիտի լինի, նրանից հետո միայն կարող է բարձրանալ, թեկուզ գլուխը մինչև երկինք հասնի: Հայոց ապագա գեղեցիկ գրականության զարգացման գրավականը ազատ Հայաստանն է, ազատ հարազատ հողը, ժողովուրդը:

Էդ ազատ Հայաստանն էլ կտա մեր գրական ուժեղ ու կենդանի լեզուն, որ լինելու է ժողովրդական բարբառների, գրաբարի ու եղած գրական լեզվի համադրությունը: Հայ ժողովրդական կենդանի բարբառների ազդեցությունն է լինելու տիրական: <...> հայ ժողովրդա-

կան բարբառները մի լեզու են և հայտնաբերում են մի ամբողջական հայություն»:

Նար-Գոս. «Համաշխարհային պատերազմը և նրա հետևանքով բռնկված հեղափոխությունը, որ նույնպես սպառնում է համաշխարհային բնույթ առնել, այնպիսի խոր անջրպետ է քաշել *անցյալի* և *սպագայի* միջև, *հնի* և *նորի* միջև, որ որևէ կամուրջ ձգել, որևէ հաջորդականություն սահմանել միանգամայն անհնարին պիտի լինի: Մեր աչքերի առջև հսկայական հեղաշրջում է կատարվում մարդկային կյանքի բոլոր ասպարեզներում և առանձնապես ցարդ եղած ընդհանուր մտապատրանքի մեջ: Վերագնահատվում են հին արժեքները, տապալվում են հավիտենական ճանաչված ձմարտությունները, խորտակվում են հին կուռքերը, մի խոսքով՝ հին աշխարհը ճարձատում է հիմն ի վեր և պիտի փլի անխուսափելիորեն, տեղի տալով նոր հիմունքներով ստեղծված դեռևս անծանոթ աշխարհի:

Այժմ կատարվում է միայն քանդման պրոցեսը, և այս պրոցեսը շուտ չի վերջանալ, որովհետև քանդվելու են այնպիսի շատ բաներ, որոնք տարբեր արմատներ ունեն:

Քանդման այս տարերային պրոցեսը, հարկավ, չի կարող անցնել առհասարակ գեղարվեստի և գեղեցիկ գրականության կողքով՝ առանց նրանց ձեռք տալու. գեղեցիկ գրականությունն իր բոլոր ճյուղերով <...> պիտի ընկնի ընդհանուր պերտուրբացիայի շրջապատույտի մեջ և պիտի վերակազմվի սոցիալ-տնտեսապես, քաղաքականապես և մտավորապես վերածնված նոր աշխարհի գեղարվեստական պահանջներին համապատասխան»:

Փափագյան. «Ներկան ոչինչ չունի ասելու սպագայի առաջադիմության մասին: <...> Ապագան <...> հղի է մեծ սպասումներով: Դժվար է գուշակություններ անել: Մեր մինչև այժմ ունեցած պատկերացումներից բոլորովին պիտի տարբերվին հայ կյանքն ու ըմբռնումները:

Չի՞ թվում Ձեզ, որ 1914-ից ի վեր ո՛չ թե հինգ տարի է անցել, այլ, կարծես, հիսուն տարի: Այդպիսի մտավոր ուստնումները իրենց անակնկալներն են ունենում մանավանդ գեղարվեստական ըմբռնման համար: Սպասե՛նք ուրեմն: Հեռու չէ՛ վերագնահատումների, նոր արժեքների և նոր հասկացությունների ժամանակը»:

Դեմիրձյան. «Ինչ վերաբերում է քնարերգության, իմ կարծիքն այն է, որ մեր ավագ բանաստեղծների և կրտսերների մեջ մի ինչ-որ

վիր Խոնդկարյանը և ուրիշներ: Նույն օրերին ստեղծվում է «Պանդոկ» գրական ակումբը. «Երևանում կազմակերպվել էր Հայաստանի գրողների միություն: Գրողների միությունից զատ՝ այդ միության մոտ 15 անդամներից կազմվել էր գրական խմբակ՝ «Պանդոկ» անունով»²³: Թումանյանի «Վերնատան» օրինակով գաղափարը Շանթինն էր, իսկ «Պանդոկ» անվանումն առաջարկել էր բանաստեղծ Ոստանիկը: Ավագներից հավաքներին մասնակցում էին Շանթն ու Աղբալյանը, երիտասարդներից՝ Զորյանը, Ռենը, Գառնիկ Քալաշյանը, Ոստանիկ Հովհաննիսյանը, Վահրամ Թերզիբաշյանը, Անուրջը, Դավիթ Անանունը, Վահան Խորենին, Արմենուհի Տիգրանյանը, Պերճուհի Բարսեղյանը, Անուշ Քալաշյանը, 1920 թ. հունվարի վերջին Երևանում հաստատվելուց հետո՝ Չարենցը: Շաբաթը մեկ անգամ խմբակի անդամները հավաքվում էին «Ռոստոմ» գրադարանում՝ թիթեղյա վառարանի շուրջ, որի նավթը նախարարության պահեստից տրամադրում էր Աղբալյանը, ընթերցում իրենց նոր գործերը, քննարկում, բանավիճում:

1919 թ. հոկտեմբերին Հայաստանի գրական ընկերությունը Երևանում կազմակերպում է իր երկրորդ երեկոն՝ «Մի նոր բանաստեղծ – Չարենց» խորագրով: Նշենք, որ Չարենցն Աղբալյանի տեսադաշտում էր վաղուց: 1917 թ. ամռան մի դեպք հիշելով՝ Նվարդ Թումանյանը գրում է. «Վերադարձանք Թիֆլիս: **Նիկոլ Աղբալյանն** էր մտող [Հ. Թումանյանի]. «Օհաննե՛ս, քեզ ո՞նց է դուր գալիս մեր էս նոր բանաստեղծը. գլխի՞ ես ում մասին եմ ասում՝ Չարենցի: Երեկ ձեռքիս նրա նոր գիրքն էր՝ «Ծիածանը». մի կարդա, տես, տաղանդավոր տղա է երևում: Նոր բան է ասում, էն էլ նոր ձևով. թարմություն կա մեջը, թափ ունի. մտքունս կա մի դասախոսություն կարդամ նրա մասին»: Որոշեցին գրողների ընկերության հերթական երեկույթներից մեկը նվիրել Չարենցին»²⁴: Եվ ահա եկավ հիշարժան պահը, բայց ոչ թե Թիֆլիսում՝ Թումանյանի հովանու ներքո, այլ Երևանում՝ Հայաստանի գրական ընկերության շրջանակներում:

Դասախոսության ազդագիրը. «Հիշեցնում ենք հայ գրասերներին, որ այսօր պառլամենտի դահլիճում երեկոյան ժամը 8-ին կայանալու է Հայաստանի գրական ընկերության հերթական ԳՐԱԿԱՆ

23 Ահարոնյան Վ., Լևոն Շանթ: Մարդը և գործը, Եր., 2019, էջ 20:
24 Թումանյան Ն., Հուշեր և գրույցներ, Եր., 1987, էջ 162-163:

ԵՐԵՎԱՆ, ուր Ն. Աղբալյանը խոսելու է՝ «Մի նոր բանաստեղծ - Չարենցի» մասին»²⁵:

Մարդիկ եկել էին տոմսակներով, դահլիճը լիքն էր: Նշենք, որ նախատեսվել էր Չարենցին նվիրված երեկոն անցկացնել հոկտեմբերի 11-ին, բայց հետաձգվել էր:

ՀՌԿ օրգան «Հայաստանի ձայն» հասարակական, քաղաքական և գրական թերթը հոկտեմբերի 30-ի՝ 9-րդ համարում՝ Հ. Ս. ստորագրությամբ լրատվության մեջ, հայտնում է. «Հայաստանի Գրական ընկերության Բ. գրական երեկոն տեղի ունեցավ ամսույս 16-ին, շաբաթ օրը՝ երեկոյան ժամը 8-ին, պարլամենտի սրահին մեջ: Երեկոյթը կազմված էր երկու մասե, գրական և գեղարվեստական: Ա. Բաժնի մեջ ընկերության պատվավոր նախագահ Ն. Աղբալյան, ելույթ ունենալով «Եղիշե Չարենց իբրև նորագույն բանաստեղծ», շատ կոնկրետ կերպով ուրվագծեց անծանոթ բանաստեղծի բոլոր երկերու բնույթը և մանավանդ անոր նորագույն գրական ուղղությունը ռուսահայ գրողներու շարքին մեջ: Նա, վերջին տաս[ը] տարվա ընթացքին տիրող Տերյանի մեկամաղձոտ և տարտամ տոնեն ազատվելով, ստեղծած է մի նոր տեսակի գրականություն, որ մեր նոր սերնդի հերոսական ընդունակությունները կը ցուցադրե և վեր կը հանե:

Հետո արտասանեցան երկու ոտանավորներ, որոնցմե առաջինը, որ արտասանեց օր. [տիկին] Ա. Տիգրանյան, թյուրքահայ բանաստեղծ Վ. Թեքեյանի գրչին կպատկաներ՝ «Կ'անձրևե, տղաս»: Հեղինակը, որ ներկա էր, արժանացավ բուռն ծափահարության, որուն պ. Թեքեյան պատասխանեց մի քանի խոսքով:

Գեղարվեստական բաժնին մեջ նվագվեցան քանի մը կտորներ պիանոյի վրա ջութակի ընկերակցությամբ:

Երեկոյթի տպավորությունը բավական լավ էր, բայց Երևանի ինտելիգենտ հասարակությունը շատ աչքի չէր ընկներ այնտեղ»²⁶:

Հանրային կրթության և արվեստի նախարար Նիկոլ Աղբալյանը խոսել է մեկուկես ժամից ավելի՝ ընթերցելով նաև հատվածներ Չարենցի գրքերից:

Երեկոն նախագահում էր Վահան Խորենին, որը «զգաստացնելու» սպառնալիքով դիտողություն է արել բանախոսին, երբ վերջինս

25 «Հայաստանի ձայն», Եր., 1919, 30 հոկտեմբերի, N 9:
26 Նույն տեղում:

ծափահարությունների ներքո անցել է «Սոմա» և «Ամբոխները խելագարված» պոեմների վերլուծությանը²⁷: Այսինքն՝ պետք չէ կոմունիստական հակումներ ունեցող Չարենցին այդքան մեծարել...

Հոկտեմբերի 16-ին Բաթում-Թիֆլիս ճանապարհով Փարիզից Երևան էր ժամանել Պողոս Նուբարի պատվիրակությունը, որի կազմում էր նաև Վահան Թեքեյանը, որը ևս մասնակցել է երեկոյին: Թեքեյանը իջևանել էր «Օրիանտ» հյուրանոցում, Հայաստանում մնացել մինչև նոյեմբերի վերջը²⁸: «Հայաստանի ձայն»-ում տպագրվել է Մահարու «Այգեկոյթ» բանաստեղծությունը՝ «Բանաստեղծ բարեկամիս՝ Վահան Թեքեյանին» ուղերձով²⁹:

Չարենցն այդ գրական միջոցառմանը ներկա չի եղել և այդ մասին տեղեկացել է մամուլից: Այդ առնչությամբ 1922 թ. «Չարենց-նամե»-ում գրել է.

**Էլ ինչո՞ւ ծիծաղեր հոգիս,
Երբ Նիկոլ Աղբալյանը մի օր
Մարսելով դահլիճն ու ֆոյեն-
Ավետեց ամբողջ աշխարհին,
Որ ծնվել է մեծ մի պոետ...**

**Որ ծնվել է երգիչ մի վառ,
Ու բերել է երգեր հրե.-
Ցնծա՛, Նաիրյան աշխարհ,-
Ցնծա՛... Եղիշե Չարենց³⁰ ...**

Աղբալյանի հուշերից պարզվում է, որ Չարենցի «Երեք երգ տխրադալուկ աղջկան» և «Դանթեական առասպել» գրքերին 1917 թ. ծանոթացել է Բաքվի «Արև» թերթի խմբագրատանը: Նրան հրավիրել էին մի հավաքություն բանախոսելու, բայց դեռ ժամանակ կար, և ժամանակն անցկացնելու համար նա սկսում է ծանոթանալ պատուհանի գոգին լցված հայերեն, ռուսերեն գրքույկներին, որոնց մեջ էին նաև Չարենցի հրատարակությունները. «Վերնագրերը ուշագրավ

27 Տե՛ս «Ջահակիր», Պէյրուբ, 1963, N 12:

28 Տե՛ս «Հայաստանի ձայն», 1919, 19 հոկտեմբերի, N 7:

29 Տե՛ս նույն տեղում:

30 **Չարենց Ե.**, Ամբողջական գործը, հատ. Ա., Պէյրուբ, 1955, էջ 424:

էին: Տեսա մի նոր մարդ, նոր նյութ, նոր վերաբերում և վարժ տաղաչափություն: Մի տաղանդավոր սկսնակ: <...> Վ. Տերյանի հետքով մի նոր բանաստեղծ էր ծագում գրականության հորիզոնից»³¹: Որոշում է առաջին իսկ առիթով անդրադառնալ դրանց, բայց ժամանակները խառն էին: Հաջորդել է դասախոսությունը «խոռոն բազմության ներկայության: Նոր բանաստեղծի անունն ընկավ ամենքի բերանը <...>, և Չարենցը դարձավ մի անուն»³²:

Չարենցի՝ աշխատանքի նշանակվելուց հետո նրանց միջև տեղի է ունեցել այսպիսի խոսակցություն.

«– Ի՞նչ պիտի անեմ,– հարցնում է Չարենցը...

– Կնստես և կգրես ինչ կարող ես:

– Ես գործի մասին եմ հարցնում, պ. Աղբալյան:

– Գործը կանեն անողները»³³:

Չարենցը Երևան է եկել 1920 թ. հունվարի 26-ին և ապրել Կոնդի կիսամութ մի փոքրիկ ներքնահարկում, որտեղ կային մի մահճակալ, մի սեղան և երկու աթոռ:

Աղբալյանի զեկուցումից հետո Չարենցն ուներ պատրաստի երկու ախոյան՝ հանձինս ՀՅԴ Երևանի կոմիտեի քարտուղար ու գրական ընկերության փոխնախագահ Վահան Խորենու և հատկապես Ավետիս Ահարոնյանի որդու՝ հանրապետության դատախազ Վարդգես Ահարոնյանի, որն Արմենուհի Տիգրանյանի ամուսինն էր: Վարդգես Ահարոնյանի հետ լարվածությունն էլ ավելի խորացել է Չարենցի հոգեխառով տարվածությամբ Արմենուհի Տիգրանյանով: Խորացել է նաև Խորենի-Չարենց թշնամանքը. խորհրդայնացումից հետո՝ մի երեկույթի ժամանակ, որին ներկա է եղել նաև Արվինդիկը, արվեստի կոմիսար Չարենցը հանել է մաուզեր ատրճանակը և կրակել պատին փակցված Վահան Խորենու նկարին³⁴:

Նշված երեկույթին Թեքեյանի ելույթից հետո Արմենուհի Տիգրանյանն արտասանել է Չարենցի բանաստեղծություններից մեկը: Մամուլի արձագանքներից. «Դասախոսը շատ հիացմունքով խոսեցավ նոր բանաստեղծի մասին, դրվատեց անոր բանաստեղծական իսկական արժանիքն ու տաղանդը, նորագույն բանաստեղծների

31 Աղբալյան Ն., Եղիշե Չարենցն ու ես (նյութ հայ գրականության համար), «Գրական-քննադատական երկեր», Պեյրուք, 1959, էջ 329:

32 Նույն տեղում, էջ 330:

33 Նույն տեղում:

34 Տես «Չարենցի հետ: Հուշեր», հատ. 1, Եր., «Նաիրի», 1997, էջ 216:

շարքի մեջ ամենաառաջնագույն տեղը տվավ անոր: Տերյանն վերջ Չարենցն է, ըսավ, մեր իրականության մեջ ամենաուժեղ նոր և ինքնատիպ բանաստեղծը...»³⁵:

«19 թվին հանդես եկավ մի այլ քնարերգակ՝ Եղիշե Չարենց: Մեր ականավոր քննադատ Ն. Աղբալյան մի հնտալից վերլուծությամբ դասեց նրան հայ գրական ընտանիքի մեջ և այն էլ բավական պատվավոր տեղ տալով...»³⁶:

Երեկոյթին ներկա է եղել նաև Մահարին: Նա այս շրջանակի մեջ էր և օրեր անց մասնակցել է Թեքեյանի պատվին Նորքում կազմակերպված խնջույքին³⁷:

Աղբալյանի զեկուցմանը ներկա է եղել Չարենցի մտերիմներից Կարինե Քոթանջյանը: Զեկուցողը նշել է, որ չգիտի՝ գրողը ո՞րք է, թե՞ մեռած, և ենթադրել, որ նա պետք է լիներ 40 տարեկան: Զեկուցումից հետո ելույթ է ունեցել Կ. Քոթանջյանը, նշել բանաստեղծի տարիքը և աշխատավայրը: Հաջորդ օրն էլ հեռագրել է Չարենցին և կանչել Երևան: Ըստ նրա՝ մի քանի օրից Չարենցը Երևանում էր, բայց Չարենցը Երևան էր ժամանել 1920 թ. հունվարի 26-ին:

Աղբալյանի զեկուցման կապակցությամբ Ս. Զորյանը գրել է. «Դրանով արդեն Չարենցը հռչակվեց մի օրում: Մինչ այդ, եթե շատ սակավ մարդիկ գիտեին Չարենցին որպես բանաստեղծի և այն էլ մեծ վերապահությամբ, այդ բանախոսությունից հետո արդեն ամենքն իմացան և համոզվեցին, որ հանձին Չարենցի մենք ունենք մի նոր իսկական բանաստեղծ... Նրա բանաստեղծությունների գրքույկներից հազիվ մի քանի օրինակներ կային Երևանում, և դրանք խլում էին իրար ձեռքից: Այս էլ պետք է ասեն, որ Աղբալյանը Չարենցին **նոր բանաստեղծ** համարելով՝ առանձնապես շեշտեց այն, որ նա հնչեցնում է նոր մտիվներ, բերում է նոր հույզեր և նոր մոտեցում երևույթներին... <...> Իսկ ինքը՝ բանաստեղծը, չկար մեջտեղ. նա Երևանում չէր. մինչդեռ ամենքն ուզում էին տեսնել, թե ո՞վ է այդ երիտասարդը, այդ խսանդով, ավյունով ու թափով պոեմների հեղինակը»³⁸:

Գրական-մշակութային միջոցառումներից պետք է հիշատակել Աղբալյանի հաջորդ ձեռնարկումները ևս: Խորհրդարանի դահլիճում

35 «Ժողովուրդ», 1919, 22 հոկտեմբերի, N 116: Որպես զեկուցման օր նշվում է հոկտեմբերի 18-ը:

36 «Յառաջ», Եր., 1920, 21 փետրվարի, N 39:

37 Տե՛ս «Հուշեր Եղիշե Չարենցի մասին», Եր., «Սովետական գրող», 1986, էջ 116:

38 **Զորյան Ս.**, Երկերի ժողովածու, հատ. 9, Եր., «Սովետական գրող», 1985, էջ 311-312:

հրավիրվում են Հայաստանի գրական ընկերության 3-րդ և 4-րդ երեկոները: Բացման խոսքով հանդես է գալիս Աղբալյանը, իսկ Վահան Թեքեյանը դասախոսում է Վարուժանի, Շահան Նաթալին՝ Յարձանյանի, Շավարշ Միսաքյանը՝ Ջոհրապի ու Ջարդարյանի մասին: Հնչում են բանաստեղծների ոգեշունչ քերթվածները: Նահատակ բանաստեղծներն ասես վերադառնում են հայրենիք³⁹:

Թեքեյանի խոսքից. «Դժվար է անշուշտ, ըսավ դասախոսը, կարճ ժամանակի մը մեջ և այսպես ավիավիտ, նույնիսկ բավարար վերլուծումը ընել Վարուժանի գործին, որ ինքնին մեծ ծով մըն է, ուր կը թափին այլազան ազդեցություններու այնքան հորդահոս գետեր, և ես երբեք այդ հավակնությունը չունիմ: Բանաստեղծի մը կենսագրությունը մեծապես անհրաժեշտ է գիտնալ, նույնիսկ իր մանրամասնություններուն մեջ, իր գործը գիտնալու համար: Վարուժանի կենսագրությունը արդեն վերլուծումն է իր գործին»⁴⁰:

Դպրոցների վերաբացման ծրագրով 1919 թ. նոյեմբերի 1-ից Չարենցը Աբովի հետ ուսուցչություն է արել Կարսի մարզի Բաշթադիկլար գյուղի դպրոցում. «Նորից Հայաստան գնացի // Տասնինը թվի վերջերին: // <...>: // Ես նորի՛ց, նորի՛ց քեզ տեսա- // Մանկություն... // Կարոտ իմ... // Կարս»⁴¹: Աշխատանքի պետք է անցնեին սեպտեմբերի 1-ի հրամանագրով, բայց տարատեսակ դժվարություններ հաղթահարելուց հետո տեղ են հասել հոկտեմբերի կեսերին: Պարապմունքները սկսվել են նոյեմբերի 1-ին: Երեք դասարաններում սովորող աշակերտների թիվը սկզբում 152 էր, բայց ընթացքում նվազել է:

Կուսակցության անդամների համառուսաստանյան հաշվառման համար ՌԿ(Բ)Կ Կենտկոմի ձևաթղթի «Աշխատանքային և ծառայողական ստաժը 1917 թ. մինչև սույն հարցումը» 32-րդ կետի «Քաղաքը կամ գավառը» հարցման բաժնում Չարենցը լրացրել է. «Մագրա, Կարսի մարզ, գբաղմունքի տեսակը՝ ուսուցիչ»⁴²:

Բաշթադիկլար (Վերին Գետիկ) գյուղը գտնվում է Կարսից դեպի պատմական Անի տանող ճանապարհի միջնամասում: Դպրոցը կիսավեր էր՝ առանց դուռ ու լուսամուտի, առանց սեղան-աթոռի: Որպես դասարան ծառայում էին իրենց կեցության համար վարձակալած եր-

39 Տե՛ս «Հայաստանի ծայն», 1919, 7 նոյեմբերի, N 11, 9 նոյեմբերի, N 12:

40 Նույն տեղում, 7 նոյեմբերի, N 11:

41 Չարենց Ե., Երկերի ժողովածու, հատ. 2, էջ 171:

42 Չարենց Ե., Գիրք մնացորդաց, էջ 287:

կու սենյակները: Աբովի հուշերից. «Քարեր շարեցինք մեր սենյակների հողե հատակներին որպես նստարաններ, իսկ դասասեղաններին փոխարինում էին երեխաների ծնկները, գրատախտակի տեղ պատին փակցրինք թիթեյա թերթ, կավիճի փոխարեն գտանք ածուխ, բաժանեցինք մեր շալակով բերված տետրերն ու մատիտները և անցանք պարապմունքների: Ընդամենը մի քանի այբբենարան ունեինք, որ մի աշակերտի ձեռքից առնում, մյուսին էինք տալիս»⁴³:

Աշակերտները՝ 8-15 տարեկան ցնցոտիապատ, անգրագետ երեխաներ: Ժամացույց ու զանգ չկային. դասի սկիզբն ու վերջը արևի շողն էր կամ պատի ստվերը: Ցուրտ եղանակին սենյակները տաքացնում էին աթարով: Սով էր: Երեխաները քաղցից ու հիվանդություններից մահանում էին: Բնակչությունը հեռանում էր: Գյուղը կտրված էր աշխարհից: Ուռքով հասնում էին երկաթգծի կայարան, այնտեղից՝ Կարս՝ աշխատավարձ ստանալու և քաղաքական անցուղարձի մասին տեղեկանալու:

Այստեղ գրվում են Չարենցի՝ վաղվա սպասումի երգերը: Այստեղ է, որ Կարսից Չարենցը բերում է մի թերթ, որն ազդարարում էր իրեն նվիրված Աղբայանի զեկուցման մասին: Եթե հավատանք հուշագիրներին, մասնավորապես՝ Կարինե Քոթանջյանին, Աղբայանի զեկուցումից օրեր անց Չարենցն արդեն Երևանում էր, ինչը ստույգ չէ:

Ինչպես այդ դպրոցում, այնպես էլ մանկատներում Չարենցը դասավանդել է նաև իր սիրած առարկաներից աշխարհագրություն: Նա այն կարծիքին էր, որ «աշխարհագրական անունները հարստացնում են պոեզիան և այն օժտում լայն աշխարհաձանաչողությամբ»⁴⁴:

1920 թ. հունվարի 26-ին Չարենցը Կարսից ուղևորվում է Երևան, ներկայանում Նիկոլ Աղբայանին և նշանակվում Հայաստանի Հանրապետության հանրային կրթության և արվեստի նախարարության հատուկ հանձնարարությունների կոմիսար⁴⁵: Ն. Աղբայանն այդ մասին գրել է. «Մտավ աղքատիկ հագուստով մի նիհար երիտասարդ, անխնամ մազերով մի գլուխ վտիտ ուսերին, դեմքի մորթը տժգույն ու քաշված և քիթը մեծ ու սուր: <...>: Լրագրի մեջ կարդալով դասախոսության մասին, թողած է պաշտոնատեղին և եկած է Երևան: Ասացի, որ նախարարությանս նախահաշվի մեջ նշանակված է մի պաշտոն.–

43 «Հիշողություններ Եղիշե Չարենցի մասին», Եր., «Հայաստան», 1961, էջ 113:

44 «Չարենցի հետ: Հուշեր», հատ. 2, Եր., «Նաիրի», 2008, էջ 355:

45 Տե՛ս **Չարենց Ե.**, Գիրք մնացորդաց, էջ 273:

«անձնական քարտուղար»: Այդ պաշտոնի համար մարդ չեմ հրավիրած. ես ինքս եմ իմ քարտուղարը, մարդու կարիք չունիմ: Բայց հիմա ես ձեզ նշանակում եմ այդ պաշտոնին: Շենքիս մեջ ունեմ մի ազատ սենյակ. կարող եք այնտեղ ապրել: Բայց ձեր «պաշտոնն» արդարացնելու համար պետք է մի բան անեք. կազմեք նախարարության շենքի իրացանկը: Դուք ազատ եք, երբ ուզեք՝ եկեք պաշտոնի»⁴⁶: Նշանակման հրամանը ստորագրել է Աղբալյանը: Մի բան անելու համար Չարենցը պետք է կազմեր նախարարության «իրացանկը»: Աղբալյանի նպատակն էր «հնար տալ ապրելու և իր կոչումին հետևելու»: Աշխատավայրը Նալբանդյան 58 հասցեում էր:

Չարենցը հունվարի 1-ից չէր կարող լինել Երևանում, քանի որ «Օրիորդ Աշխենին» բանաստեղծությունը գրել է հունվարի 15-ին Կարտում և նույն օրն էլ նույն տեղում նրան է նվիրել իր գրքերը:

Ի՞նչ էր անում Չարենցը նախարարությունում: Աղբալյանի տեղակալ Պողոս Ստոնիկյանը բողոքել է. «Դուք նրան երես եք տալիս, պարո՛ն Աղբալյան, ոչ մեկի չի ենթարկվում, ոչինչ չի անում, նախարարության իրացանկն էլ դեռ չի կազմել»: Աղբալյանը բարեհոգի ժպիտով պատասխանել է. «Դուք խելոք մարդ եք, պարո՛ն Ստոնիկյան, Չարենցը վաղը կարող է գրել մի բանաստեղծություն, որն ավելին կարժենա, քան նախարարությանդ ամբողջ փտած գույքը... Հանգիստ թողեք նրան»⁴⁷: Այս գրույցին ներկա է եղել Կարո Մելիք-Օհանջանյանը և պատմել Գ. Անանյանին:

Աղբալյան-Չարենց դաշինքը հանրապետության դատախազ Վարդգես Ահարոնյանի սրտով չէր, մանավանդ որ հայտնի էր նրա կնոջ՝ բանաստեղծուհի Արմենուհի Տիգրանյանի և Չարենցի փոխադարձ համակրանքի մասին: Եվ նա Գ. Նայիրյան ստորագրությամբ հունվարի վերջին և փետրվարին մաս-մաս տպագրում է «Հայ գրականությունը 1919 թվին» հոդվածը: Անդրադառնալով մի քանի հեղինակների՝ նա հիմնականում քննաբանում է Չարենցի գրքերը, հատկապես՝ «Ամբոխները խելագարված» պոեմը, և, հակադրվելով Աղբալյանի դրույթներին, ժխտում Չարենցին: Նրան հատկապես զայրացնում էր «բոլշևիկյան քաղաքացիական կռիվների» անդրադարձը «Ամբոխները խելագարված» պոեմում: Ըստ նրա՝ «Չարենցի կարո-

46 Աղբալյան Ն., Եղիշե Չարենցն ու ես (նյութ հայ գրականության համար), «Գրական-քննադատական երկեր», էջ 329-330:

47 Անանյան Գ., Եղիշե Չարենց, Եր., «Սովետական գրող», 1987, էջ 57:

դությունը մեծ չէ և որոշ, բայց նա կա, և նրա ամենամեծ հայտնագործությունը, որ 19 թվին բաշխեց մեզ, նրա բոլշևիկյան կոիվներից մի դրվագն է բանաստեղծորեն կերտած»⁴⁸: Հողվածն ավարտվում է այսպիսի գնահատությամբ. «Եվ այն խոյանքը, որ դրել է Չարենցը իր «Ամբոխները խելագարված»-ի մեջ, և այն պաշտումը, որ նա ունի դեպի ամբոխը, թափն ու կոիվը, կմնա 19 թվի հայ քնարերգության լավ գյուտերից, լավ էջերից մեկը: <...>: Մեր կարծիքով, դեռ Չարենցը իրեն չգտած բանաստեղծ է: Նա նաև անհավասարակշիռ է որպես գեղագետ... Չարենցը անգիտակ և ինքնաբուխ երգիչ է. այս հանգամանքը իրավունք է տալիս մեզ, ելնելով հոգեբանական մի շարք որոշ դրույթներից, ասելու, որ այսքան ծայրահեղ կենսահիացումը, որը յուրահատկորեն հիմնավորված չէ, կարող է տեղի տալ՝ չստեղծելով ոչինչ մնայուն»⁴⁹: Գ. Անանյանը Գ. Նայիրյան ստորագրությունը համարում է Գառնիկ Շահինյանի գրչանունը⁵⁰:

Մշակութային նախաձեռնություններից առանձնանում է այն, որ 1919 թ. հոկտեմբերի 25-ին Հայաստանի Հանրապետությունում վերականգնվում և նշվում է Թարգմանչաց տոնը:

Ի՞նչ են ասում «Չարենց-նամե»-ի հետևյալ տողերը 1919 թ. վերաբերյալ.

Կարս:

Տասնըինը թվին:

Տասնըինը թվի վերջերին:

Նույն երկինքն է՝ կաթսա արևի:

Նույն խշռոցը քշփչան ջրի...

Բայց արևը իզուր է փորում

Կուրացած աչքերը շներերի...

Իզո՛ւր էր նայիրյան հեռուն

Ունկնդրում քշփչուն ջրին⁵¹...

48 «Յառաջ», 1920, 29 յունվարի, N 20:

49 Նույն տեղում:

50 Տե՛ս **Անանյան Գ.**, նշվ. աշխ., էջ 54-55: Գառնիկ Շահինյանի մասին տե՛ս **Գասպարյան Ղ.**, Բանաստեղծն ու իր ընթերցողը, «Հայ գրականություն», գիրք 6, Եր., «Տիգրան Մեծ», 2017, էջ 311-321:

51 **Չարենց Ե.**, Երկերի ժողովածու, հատ. 2, էջ 172:

որից 10-ը՝ տրիոլետ⁵⁵: Դրա «Գալանտ երգեր» ենթավերնագրի համար հիմք կարող էր լինել Պոլ Վեռլենի «Գալանտ տոնակատարություններ» («Les fetes galantes», 1869) ժողովածուի վերնագիրը:

Երևանյան գրական երեկոներից մեկի ժամանակ Չարենցն ընթերցում է գործեր նշված շարքից և արժանանում Շանթի հավանությանը: Զորյանը վկայում է. «Այդ հավաքույթներից մեկում կարդաց «Էմալե պրոֆիլը». Լևոն Շանթը համակրանքով խոսեց Չարենցի մասին: Դա ևս նպաստեց Չարենցի համբավին»⁵⁶:

Չարենցի պոեզիայի մշտական ուղեկից Երգի դիցուհին այստեղ ներկայանում է Բարձրաշխարհիկ Տիկնոջ կերպարանքով: Շարունակում է պառնասականների (Լըկոնտ դը Լիլ, Թեոֆիլ Գոթիե, Հերեդիա), նաև խորհրդապաշտների (Վեռլեն, Բլոկ, Տերյան) ավանդույթը. աչքի առջև Գեղանի Տիկինն է՝ իր բոլոր հմայքներով, քմայքներով, զուգսերով, նագերով, բույրերով ու շարժումներով: Ակնհայտ է ֆրանսիական պառնասականների ներկայությունը՝ Լըկոնտ դը Լիլի պոեզիայի անմիջական ներգործությունն ու հեղինակի մասնակցությունը, Թեոֆիլ Գոթիեի «Էմալներ և կամեյաներ» (1852) հուշանվերային գրքի շունչը, Ժոզե Մարիա Հերեդիայի հնչյունների քանդակային նրբագեղ արտահայտչականությունը («Ռազմավար», 1893): Ընդհանրություններ ունի Տերյանի «Կատվի դրախտ», Բլոկի «Չյունե դիմակ», Ռիկլեի «Նոր բանաստեղծություններ» շարքերի, Բոդլերի «Չարի ծաղիկներ»-ի հետ:

Եղիշե Չարենց-Արմենուի Տիգրանյան անձնական հարաբերությունները ձևավորվել ու խորացել էին 1920 թ. հունվարի վերջից: Նրանք իրար կարող էին ճանաչել «Պանդոկ» գրական ակումբի հանդիպումներից: Մտերմացել էին Աղբալյանի գլխավորած նախարարությունում, որտեղ միասին էին աշխատում: Կարսից վերադառնալուց հետո Չարենցը ներկայացել էր նրան, նրա միջոցով՝ Աղբալյանին: Արմենուիին Արմեն Տիգրանյանի քույրն էր, Ավետիս Ահարոնյանի որդու՝ հանրապետության դատախազ Վարդգես Ահարոնյանի կինը:

Արմենուիին կապված էր հայ գրական շրջանակների հետ: Նրանով խանդավառված էին Թումանյանը և Տերյանը: 1910-1912 թթ. հանդիպել է Տերյանի հետ, ունեցել նամակագրական կապ (հիշենք

55 Հինգ բանաստեղծություն 1921 թ. տպագրվել է «Գեղարվեստ» հանդեսում (N 7), իսկ շարքն ամբողջությամբ՝ «Երկերի ժողովածու»-ի 1-ին հատորում «Արմենուի Տիգրանյանին» նվիրումով:

56 «Հուշեր Եղիշե Չարենցի մասին», էջ 69:

Տերյանի երեք նամակները՝ հասցեագրված Արմենուհի Տիգրանյանին⁵⁷: Թիֆլիսից 1910 թ. Տերյանին հղած իր մի նամակում Տիգրանյանը զետեղել էր բանաստեղծություններ՝ «Գարուն» հանդեսում տպագրելու համար, և հարցնում էր ժամանակի մետրի կարծիքը: Պարզվում է, որ նա նախապես Տերյանից նամակ էր ստացել, որում նշումներ կային իր բանաստեղծությունների վրա⁵⁸:

Առաջին նամակում (9.VII.1911) Տերյանը հիշում էր Տիգրանյանի տանը անցկացրած հաճելի մի երեկո, երբ կարդում էին «Աբու-Լալա Մահարի»-ն: Երկրորդում (5-10.VI.1912) ասում է, որ իրեն հաճելի կլիներ մոտիկ լինել Արմենուհի Տիգրանյանին և խոսել իր գրական ծրագրերի մասին, որովհետև դա ամեն մեկին մատչելի, առավել ևս հասանելի բան չէ: Բացահայտ արհամարհանք տածելով գրականություն չըմբռնողների, գրականության անունից վեր թռածների հանդեպ՝ Տերյանը գրում է. «Գեղարվեստ հասկանալն էլ մի երկնատուր շնորհք է, մի տաղանդ և որքան որ դուրեկան է այդ տաղանդով օժտված մեկի հետ զրուցելը, նույնքան անտանելի է այդ տաղանդից զուրկ մարդկանց հետ *խոսելը*»⁵⁹: Երրորդ նամակը (7.VIII.1912) ավելի անձնական-մտերմական բնույթ ունի: Նկատելի է, որ Տերյանը գնահատել է բանաստեղծուհու ձիրքը: «Ձեր»-ը, «Դուք»-ը նա գրել է մեծատառ:

Անձնական-անմիջական ներշնչանքով Տիգրանյանը գրում էր տերյանական բանաստեղծություններ: Արմենուհի Տիգրանյան (Մենուհի) ստորագրությամբ 1914 թ. Թիֆլիսում լույս է ընծայում երազներից, սիրուց, կարոտից, աղոթքից, թախծից, ցավից, մորմոքներից ու հուսահատությունից հյուսված «Բանաստեղծություններ» քնքշանվաղ գրքույկը, որն արժանանում է Նիկոլ Աղբալյանի գրախոսությանը. «Արմ. Տիգրանյանը պատկանում է Վ. Տերյանի խմբին. նույն ժամանակի ծնունդ է և նույն տրամադրությունների երգիչ: Նրա գրքույկը՝ իբր վավերագիր, կարող է մեզ նպաստել ճանաչելու հոգիների նույն տեսակը, որ ստեղծել է մեր կյանքը վերջին տասնամյակում»⁶⁰:

Միշտ լինում են միջին շերտի բանաստեղծներ, որոնց անունները երբեմն խառնվում են հաստատուն շերտ կազմող անտաղանդներ

57 Տե՛ս **Տերյան Վ.**, Երկերի ժողովածու, հատ. 4, Եր., 1979, էջ 24-26, 39-41, 47-48:

58 Տե՛ս ԳԱԹ, Կարեն Միքայելյանի ֆոնդ, վավ. N 779:

59 **Տերյան Վ.**, Երկերի ժողովածու, հատ. 4, էջ 40:

60 **Աղբալյան Ն.**, Գրական-քննադատական երկեր, էջ 302:

րի անունների հետ և մոռացվում: Տերյանից հետո այդ միջին շերտի ներկայացուցիչներից էր Արմենուհի Տիգրանյանը:

1918 թ. Արմենուհին տեղափոխվում է Երևան: Չարենցի հետ բանաստեղծություններ էր տպագրում «Հայաստանի կոոպերացիա» երկշաբաթաթերթում: Ահա մի քառատող, որում իսկական կին է, որը նաև հաճելի սեթևեթել գիտի.

**Այսօր կրակ եմ հագել,
Այսօր ժպիտ եմ համակ.
Այսօր այցի եմ եկել–
Անկոչ և անժամանակ⁶¹:**

Պահպանվել են Արմենուհի Տիգրանյանին նվիրված Չարենցի բանաստեղծությունների ինքնագրերը, որոնք որոշ վրիպակներով տպագրվել են «Անտիպ և չհավաքված երկերում»⁶²: Այստեղ պահպանվել է նաև Արմենուհու երկու ինքնագիր: Առաջինը թվագրված է 1920 թ. փետրվարի 16-ով.

**Այսպես բաժան, բախտով դաժան
Քեզնից հեռու մի լուռ ուրու
Տենչում էի երազում գեթ լինել քեզ հետ, լինել քեզ հետ:
Ու ժպտացի, ու թախծեցի, երբ կարոտով նկատեցի
Իմ դեմ դիմաց պատից կախած մի լուռ նկար՝ խենթ ճանապարհ,
Փռշով արբած ձիերն անսանձ
Թռչում էին սուր-սրընթաց.
Միրտս էլ խաբված այնպես թնդաց
նկարն անհուն հաճույք թվաց⁶³:**

Երկրորդը թվագրված է 1921 թ. մայիսի 20-ով և վերնագրված է «Չարենցին էքսպրոմտ».

**Չարենց, գիտես, չէ՞, դու գիտես
Որքան թանկ է ընկեր հոգին,**

61 «Հայաստանի կոոպերացիա», 1920, N 1, էջ 15:

62 ԳԱԹ, Չարենցի ֆոնդ, վավ. N 3:

63 Նույն տեղում:

**Բայց դու գիտես և չգիտես
Ով է եղել միշտ բո կողքին:**

**Եվ ինձ նման դու էլ որքա՛ն
Թանկ ես վատնել, թանկ ու բյուրեղ՝
Հավատալով, որ կան, ախ կան
Լավեր, նորեր մեր մեջ այստեղ⁶⁴ ...**

Պահպանվում է նաև Լեյլիի ալբոմը, որը բացվում է Արմենուհի Տիգրանյանի՝ «Նորը լավ է, քան թե հինը. // Ապրենք նորերս նորով» տողերով սկսվող բանաստեղծությանը (13.IV.1919, Թիֆլիս)⁶⁵: Հաջորդում են Չարենցի ձեռագրով սեպտեմբերի 16–23–ը գրված «Խրախճանք», «Շամիրամ», «Անկումների սարսափից», «Վարսավիրի հմայքներ», «Հայացքների թակարդում», «Շան կարոտներ», «Խեղկատակ» և «Մեսալին» բալլադները, ապա՝ 1921 թ. մայիսին Արմենուհու հուշատետրում գրած երեք պատասխան տրիոլետները՝ «Մենք տվել ենք վառվող մեր հոգին...», «Ու հիմա մնացել ենք մենակ...», «Մնացել ենք մենակ ու շվար», այնուհետև՝ «15.I.1922» թվագրությամբ «Մոսկովյան տրիոլետները» (գրված Մոսկվայում)՝ «Կարտոշկա, պրիմուս ու ձմեռ...», «Հիշո՞ւմ ես կոնյակը Սահակի»⁶⁶:

Արմենուհի Տիգրանյանի ամուսնու՝ Վարդգես Ահարոնյանի հետ Չարենցի հարաբերությունները լարվում են կովագանության աստիճանի: «Էմալե պրոֆիլը Ձեր» շարքի հինգ բանաստեղծություն Չարենցը 1920 թ. սեպտեմբերի 11–ին ուղարկում է Գարեգին Լևոնյանին՝ տպագրելու «Գեղարվեստ» հանդեսում: Սեպտեմբերի 20–ի նամակում խնդրում է չտպագրել, բայց արդեն ուշ էր⁶⁷: Պատճառը Վ. Ահարոնյանի հետ անձնական փոխհարաբերություններից ծագած լարվածությունն էր:

1922 թ., երբ Արմենուհին ու Վարդգեսն արդեն Հայաստանում չէին, Չարենցը «Էմալե պրոֆիլը Ձեր» շարքն անբողջությամբ տպագրում է «Երկերի ժողովածու»-ի 1–ին հատորում:

64 Սույն տեղում:

65 Տե՛ս նույն տեղում, վավ. N 245:

66 Տե՛ս «Հայրենիք» ամսագիր, Բոստոն, 1952, N 12:

67 Տե՛ս **Չարենց Ե.**, Երկերի ժողովածու, հատ. 6, էջ 270:

Կան նաև շարքից դուրս բանաստեղծություններ՝ «Նորից՝ Արմենուհի Տիգրանյանին» (չորս գործից բաղկացած շարք), «Միայն քեզ համար (Արմենուհի Տիգրանյանին)», «Միայն քեզ համար (Արմենուհի Տիգրանյանին)», «Արմենուհի Տիգրանյանին»՝ թվագրված «8. III. 1920», «9. III. 1920», «10. III. 1920», որոնք 1964 թ. Հայաստան է բերել⁶⁸ հոգեպես ոչ թե խաղաղված, այլ արդեն մոխրացած Վարդգես Ահարոնյանը, երբ վաղուց չկար Չարենցը, չկար նաև Արմենուհին: Նրա վեհորեն ասպետական այդ քայլն արժանի է հիացմունքի: ԱՄՆ վերադառնալուց հետո՝ 1965 թ. փետրվարի 19-ին, Վ. Ահարոնյանը մահացել է:

Բանաստեղծությունները լույս են տեսել հետևյալ ծանոթությամբ. «Եղիշե Չարենցի ստորև տպագրվող բանաստեղծությունները, նվիրված Արմենուհի Տիգրանյանին, Հայաստանի սովետական գրողների միությանն է հանձնել Ամերիկայի Միացյալ Նահանգներից որպես զբոսաշրջիկ Երևան ժամանած Վարդգես Ահարոնյանը»⁶⁹: Ավելացվում է, որ դրանք «սերտորեն առնչվում են» «Էմալե պրոֆիլը Ձեր» շարքին:

Արմենուհի Տիգրանյան-Ահարոնյան ստորագրությամբ 1969 թ. Բեյրութում լույս է տեսել «Բանաստեղծություններ» գիրքը, որին կցված է Էլեն Բյուզանդի (Եղիսաբեթ Ստամբուլցյան) շատ խոսուն առաջաբանը: Գրության թվականները բացակայում են, ինչը հավանաբար արված է հատուկ միտումով՝ վերացնելու Չարենցի հետ կապված ինչ-ինչ հետքեր:

1920 թ. Չարենցն արդեն տարված էր Արփենիկով, թեպետ հոգում դեռ մխում էր Արմենուհու սիրո քաղցր թույնը: Սերը եղել է փոխադարձ, վկայությունն Արմենուհի Տիգրանյանի՝ «Օրագրիս թերթիկներից: Երբ հոգիները խոսում են» զգացական խոր ապրումներով գրությունն է՝ «**Եղիշե Չարենցին՝ Մենուհուց**»: 1921 թ. սառնաշունչ մի օր Չարենցն ու Արմենուհին պատահաբար հանդիպել են: Այդ մասին է Տիգրանյանի օրագրությունը.

«Ձյուն էր: Ձմեռ: Երևանի հունվարն էր: Քայլում էի մենա՛կ, երազկոտ ու լռի՛ն: Բեռ կար հոգուս վրա, անհուն կարոտի մի բեռ:

Նրան էի երազում: <...>: Հանկարծ դեմս ելար: Ինչպե՛ս տառապել էի ու ապրել քո հոգեվարքը...

68 Պահվում է ԳԱԹ-ի Չարենցի ֆոնդում (վավ. N 3):

69 «Գրական թերթ», Եր., 1964, 25 սեպտեմբերի, N 39: Ինքնագրերը ԳԱԹ են հանձնվել 15.12.1982 թ. (տե՛ս Չարենցի ֆոնդ, վավ. N 3):

Հասակդ ավելի բարձր թվաց, ճակատդ ավելի բաց, և վեհագույն, տառապանքից խորացած աչքերդ – ավելի գեղեցիկ և իմաստուն: Իսկ այն մորթե գլխա՛րկը... Որքան կատարյալ էր դարձնում քո կեցվածքը:

Օ՛, որքա՛ն հպարտ էիր ու երջանիկ այդ պահուն. գլուխդ միշտ վեր էիր բռնել հայրենիքիդ դահիճների առջև:

Հպարտ էի և ես: Զգացի, թե կյանքում պահեր կան, անփոխարինելի պահեր, երբ մարդ կարող է ըմբռնել ուրիշին, իրենից ավելի երջանիկ լինել ուրիշի համար:

Լավ էր այդպես: Հոգիս աղոթքներ էր մրմնջում և կյանքդ օրհնեցու: Ուզեցի, որ հանդիպումս կարճ լիներ:

Փոքրիկ, քնքո՛ւշ և տառապած մեկ էակ արդեն քայլում էր կողքիդ: Արժանի էր քեզ: Երջանիկ էի և նրա համար (նկատի ունի Արփենիկին՝ Չարենցի ապագա կնոջը – Դ. Գ.):

Մենք բաժանվեցինք: Ձյունի պես ձերմակ և մաքուր մի զգացում ողողել էր հոգիս, երբ քայլում էի նորեն մենակ, նորեն կարոտներիս հետ: Բայց տխրեցի մի պահ: Ինչո՞ւ նրա համար էլ այդպես հպարտ ու երջանիկ չեմ <...>: Երանի՛ նրանց, որոնք աղոթելու անկյուններ ունեն իրենց հոգիների խորքում»⁷⁰:

Մտերմական կապը վերածվեց բանաստեղծական երկխոսության. ոչ միայն Չարենցի «Էմալե պրոֆիլը Ձեր» շարքն է և շարքից դուրս նշված գործերը, այլև Տիգրանյանի եղերերգերը՝ նվիրված Չարենցին և իմաստավորված իրենց միավորող սիրո, կարեկցանքի, հեռացումի, այդ ամենով հանդերձ՝ հարազատության թանկ զգացումներով: Ահա «1920, Երևան» թվագրությամբ գործերից մեկը, որի հերոսը հենց ինքը՝ Չարենցն է.

**Քան մեղմությունը շոյող աչքերի,
Միրում եմ խայթող հայացքը քո չար.
Ավելի դյուրիչ է խոսքդ չարի,
Քան բարությունը, հեզությունն անձար:**

**Լույս երագներես ես իմ ավելի
Միրում եմ հոգուդ մուրջ անթափանց,**

70 «Հայրենիք», 1931, N 12, էջ 75:

**Անգուշակելի հույզերով է լի
Հոգուդ մթությունը անդնդաբաց:**

**Եվ հուզումներես, աղոթքներես շատ,
Ծնրադրում եմ կեղծիքիդ առջև.
Ա՛ն անմեղությունը հոգուս վհատ
Ու դատիր, դատիր կախադան մինչև:**

**Դատիր իմ անգոր բարությանս համար,
Որ մեղրը չարիդ դեռ չեմ ճաշակել,
Դատիր ու պատժիր չարովդ անաչառ,-
Տե՛ս, ուժիդ առջև ծունկի եմ եկել:**

**Քան իմ Աստվածը վսեմ ու բարի,
Պաշտում եմ կամքը քո սատանայի...
Սիրում եմ խայթը քո չար աչքերի,
Դատված լինեմ թող, միայն թե նայի⁷¹...**

Եղիշե Չարենց-Արմենուհի Տիգրանյան մարդկային, գրական հարաբերությունը մի ամբողջ հոգեցունց վեպ է, որտեղ և՛ իրական մարդն է, և՛ արվեստը, և՛ ժամանակը, և՛ պատմությունը... Հոգեբանական անդունդի եզրին Արմենուհին սիրո խոսք է փոխադարձում Չարենցին:

5. Իրականության դեմքը

Ինչպես ժողովրդի, այնպես էլ գրողների նյութական վիճակը ողբալի էր: Իրավիճակի մասին պատկերացում է տալիս Վրթանես Փափազյանի «Նամակ խմբագրին» գրությունը (1920, 4 մարտ)՝ հասցեագրված «Հայաստանի կոոպերացիա»-ի խմբագիր Դավիթ Անանունին. «...Գիտեմ, որ Հովհաննես Հովհաննիսյանը, որին նույնպես հանդիմանում եք, իր բազմամարդ ընտանիքը կերակրելու հաց չունի: Դեռ երեկ էր, որ դիմեց մեր վանքի հացառատ ու լիությունից պայթող ամբարին և խնդրեց *փոխարինարար* 30 փութ [՝] ցորեն, լաց եղավ, այո՛,

71 Արմենուհի Տիգրանյան-Ահարոնյան, Բանաստեղծություններ, Պէյրուս, 1969, էջ 62:

լաց եղավ... Բայց վանքը մերժեց տալ: Պետք եղավ մի քանի անձերի <...> վրդովմունքը, <...> բուն բողոքները, որպեսզի, վերջապես, գիջեն վանականները և հայ գրողին մի բուռ ցորեն փոխ տային:

Դուք չե՞ք տեսել, թե ինչպես է լալիս մի ալեհեր գրող, երբ պատմում է ձեզ այդ ամենը դողդոջուն ձայնով: Դուք չե՞ք տեսել, թե ինչպես 30–40 տարվա վաստակավոր մի հեղինակ շվարուն, սոսկալի շվարուն ու գրեթե խելքը կորցրած այս այն կողմ է վազում, որպեսզի իր ընտանիքը փրկի սովից... [վանքը նրան ստիպել է դուրս գալ հյուրանոցից, մերժել է տասը կտոր փայտ տալ]: Եվ դուք դեռ հանդիմանում եք, որ հայ գրողը «քար անտարբերության մեջ է ընկել»։ դեռ սիրտ ունիք վրդովվելու, որ մենք չենք կարողանում գրիչ ձեռք առնել ու Ձեր թերթին մի բան ուղարկել:

Գիտե՞ք Դուք արդյոք, որ ես ամսական միայն 4.600 ռ. ռոճիկ ունեմ, 18 ժամ դաս...

Եվ Դուք ուզում եք, որ ես սիրտ, տրամադրություն և կամ *մի ժամ* գոնե խաղաղ, անդորր հոգի ունենամ, որպեսզի մի բան գրեմ Ձեզ համար և առհասարակ գեղարվեստի, գրականության մասին մտածեմ...

Ո՛չ, բարեկամ, մի խնդիր այն, ինչ որ ջանասիրությամբ մեռցնում են մեր մեջ ամենքը և ամեն ինչ: Մի հանդիմանիք մեզ, որովհետև մեր զարհուրելի դառնությունը բավական է մեզ, երբ անդրադառնում ենք, թե ինչպես հետզհետե, աստիճանորեն գռեհկանում ենք՝ գռեհիկների հետ գործ ունենալով, ինչպես ջնջում ենք մեր գեղեցկագիտական, գեղարվեստական ամեն նշույլ և թե ինչպես մի առ մի կտրտում ենք մեր՝ ոստնումի ձգտումներ ցույց տվող թևերի բոլոր փետուրները: Եվ այդ գործով զբաղված են ամենքը, վերևից մինչև ներքև, գիտակցաբար կամ անմտորեն:

Մի խնդիր այնտեղից ցորեն, ուր կոխկռտում են ամեն տեսակ ոտներ՝ գարշ ինստինկտների դրդումով, զզվելի անձնական շահերով:

Մի՛ հանդիմանիք, թող որ ինքներս լանք մեր ոստնումների, երազների և այնքան քնքուշ միտումների ավերակների վրա:

Մի՛ վրդովվիր ու մի գայրանար. թող որ մեր զգացած խորունկ դառնությունը աստե մեզ և մաշե այսպես խուլ ամայությունների մեջ:

Ներիր մեզ, որ չենք կարողանում անոթի մնալ, տառապել, գռեկությունների մեջ ապրել: Մեր զգացմունքների էն լավագույնները քրքիջների և լաիրշությունների առարկա թողնել... ու գրիչ ձեռք առնել Ձեր հանդեսին գրվածք ուղարկելու:

1920. մարտ 4, Էջմիածին»⁷²:

Այս ամենը Չարենցի աչքի առաջ էր, ինքն էլ՝ դրա մեջ:

Ինչ-որ բան փոխելու հույսով Հայ գրողների ընկերության նախագահ Հ. Թումանյանը ՀՀ կրթության և արվեստի նախարարին (Ն. Աղբալյանին) 1920 թ. ապրիլի 2-ին Թիֆլիսից Երևան նամակ է հասցեագրում. «Քաջածանոթ լինելով հայ գրական մարդկանց վիճակին՝ գալիս եմ հայտնելու, որ նրանք ընդհանրապես գտնվում են վերին աստիճանի ծանր դրության մեջ, և խնդրում եմ արտակարգ կերպով օգնության հասնեք մեր էդ թանկագին ուժերին, որոնք կազմում են հոգևոր Հայաստանը:

Միաժամանակից հետո թերևս նրանցից ոմանց համար արդեն ուշ լինի ամեն օգնություն»⁷³: «1920, 18 մարտ» թվագրությամբ նակագրված է. «Հեռագրել, որ գտնե և վճարե 5000 ռ. մինչև փոխադրել կարենամ, փոխադրել 5000 որևէ հողվածից: Հետագայում վերականգնել համապատասխան վարձից»⁷⁴:

Այս ընթացքում իրենց մահկանացուն են կնքում Մամբրե Մատենձյանը (մարտի 24-ին) և Վրթանես Փափագյանը (ապրիլի 26-ին):

Երկու ամիս ուշացումով սամուլը գուժում է Տերյանի մահը. «Հաստատ աղբյուրներից հաղորդում են, թե բանաստեղծ Վահան Տերյանը վախճանվել է: Հանգուցյալը խորհրդային իշխանության մոտ հայկական գործերի վարիչներից մեկն էր: Նա տառապում էր թոքախտից: Վախճանվեց երիտասարդ հասակում»⁷⁵: Այս ծանր կորստին Չարենցը դեռ պիտի անդրադառնար թե՛ իր բանաստեղծություններում («Վահան Տերյանի հիշատակին») և թե՛ նամակներում:

1922 թ. մարտի 20-ին Չարենցը Մոսկվայից նամակ է հղում Գրիշա (Գեղամ) Ադամյանին: Խորապես ցավում էր Գառնիկ Քալաշյանի մահվան համար. «Եվ հետո՝ գրող էր: Լավ թե վատ – մի կողմ թող-

72 Այս նամակը Դավիթ Անանունի դիմումի հետ տպագրվել է «Հայաստանի կոոպերացիա»-ում (15 մայիսի, N 9) Վրթանես Փափագյանի մահվանից մեկ ամիս անց:

73 Թումանյան Հ., Երկերի լիակատար ժողովածու, հատ. 10, Եր., ԳԱԱ «Գիտություն» հրատ., 1999, էջ 346-347:

74 Նույն տեղում, էջ 681:

75 «Մշակ», Թիֆլիս, 1920, 7 մարտի, N 44:

նենք, բայց որ նա ամբողջ հոգով զգում էր գրականությունը, ապրում էր գրականությամբ, շնչում էր գրականության համար – կասկածից դուրս է: <...>:

Գիտես, Գրիշա, ինչ որ եղերական բան կա այն բախտի մեջ, որ վիճակվել է մեր սերնդին, մանավանդ մեր արդի գրական սերնդին: Այնպիսի մեծ գրական մարդ, ինչպիսին էր Տերյանը, որը, այսպես թե այնպես, միակ այունն էր մեր ետ-Թումանյան ստեղծագործության – մեռավ, և կարծես ոչ ոք չնկատեց այդ մահը, ոչ ոք չզգաց նրա եղերականությունը և այն բացը, որ մնաց մեր գրականության մեջ Տերյանից հետո: Այդպես եղավ Վ. Տերյանի մահվան ժամանակ, պարզ է, որ Գ. Քալաշյանի մահը ավելի պիտի աննկատելի անցներ, քան Տերյանինը: <...>: Այնպիսի արհավրալից օրերին, ինչպիսին ապրում ենք մենք հիմա – երկու պոետների մահը ավելի չէր կարող նկատելի լինել, քան այն, ինչ որ եղավ. այսինքն. Վ. Տերյանը մեռավ այն ժամանակ, երբ Հայրենիքում դաշնակցականներն էին, որոնք և ուշադրության չառան պոետի մահը, որովհետև նա բոլշևիկ էր,– իսկ Գ. Քալաշյանի ժամանակ Հայրենիքում բոլշևիկներն էին, որոնք նույնպես ավելորդ համարեցին նկատել պոետը՝ որովհետև նա դաշնակցական էր: Եթե մենք, պոետներս, մի քիչ նամուս ունենայինք – վաղուց պիտի հրաժարվեինք պոետ լինելուց... Երբ այն, որի համար ամեն ինչ կարող ես գոհել, որը նպատակն է կյանքիդ՝ ամենայն հեշտությամբ ծածկվում ու կորստյան է մատնվում, որովհետև դու բացի պոետ լինելուց եղել ես և... քաղաքացի: Ради бога, սպանեք քաղաքացուն, բայց մի սոռանաք պոետը: Քաղաքացին այսօր է, պոետը – միշտ: <...>: Վ. Տերյան և Գ. Քալաշյան: Երկու պոետ: Երկու քաղաքացի: Մեկը՝ դաշնակցական, մյուսը՝ բոլշևիկ: Ֆրոնտում կսպանեին իրար կամ Չեկա կնստացնեին: Բայց իրենց սրտում, իրենց էության ամենախնտիմ խորքերում ինչքան են նման իրար: Եվ ես գիտեմ, որ եթե «Այն» աշխարհը լիներ, և նրանք «Այնտեղ» իրար հանդիպեին – եղբայրաբար կհամբուրեին իրար: <...>: Փա՛ռք նրանց և հավե՛տ օրհնություն նրանց հիշատակին»⁷⁶:

Գառնիկ Քալաշյան.

Երանի՛ ձեզ, որ պիտի գաք

Մեզնից պայծառ, մեզնից ժպտո՛ւն...

76 Չարենց Ե., Երկերի ժողովածու, հատ. 6, էջ 385-387:

**Մենք մեր տան մեջ օտար եղանք,
Դուք տիրաբարձ մտեք մեր տուն...**

Վահան Տերյան.

**Երանի նրան, ով հայրենական
Խաղաղ հարկի տակ հանգչում է հիմա...
...Ով խաղաղ սրտով մտնում է շիրիմ-
Հազար բյուր անգամ երանի նրան...**

Չարենցը քաղաքական տարաբևեռ հայացքների ներքո տեսնում է նրանց բուն նույնական էությունը և կողք կողքի դնում բանաստեղծական տողեր: Նամակի վերջում նա տեղեկություններ է հաղորդում իրենց մասին. «Այստեղ ապրում ենք էլի: Արփիկը սովորում է – ես անգործություն եմ անում: Ամբողջովին զբաղված եմ գրքերիս հրատարակությամբ <...>: Գրական նորություններ կան, բայց նամակով այդ մասին բան չես ասի: Շատ-շատ անուններ, որոնք միևնույն է ոչինչ չեն ասի անծանոթ ընթերցողին: Կգամ՝ գրքեր կրերեմ՝ կխոսենք»⁷⁷:

Այս ընթացքում ծանրանում է նաև երկրի քաղաքական վիճակը: 1920 թ. ապրիլի 20-ին Լևոն Շանթի գլխավորությամբ կազմվում է հանձնաժողով՝ Ռուսաստանի հետ բանակցելու և պայմանագիր կնքելու նպատակով, բայց գործը ձգձգվում է:

1920 թ. ապրիլի 26-ին Քենալ Աթաթուրքը նամակ է հղում Լենինին, որով խնդրում է ռազմական դաշինք և օգնություն՝ ոսկի, զինամթերք, ռազմական տեխնիկա, բժշկական գույք, պարենամթերք: Ռուսաստանի աջակցությունը ստանալու համար նրանք առերես իրենց հայտարարում են հեղափոխության կողմնակիցներ և սոցիալիստներ: Քենալն ստեղծում է իրեն ենթակա կոմունիստական կուսակցություն և Ռուսաստանից ստանում 39.275 հրացան, 63 մլն փամփուշտ, 327 գնդացիր, 54 թնդանոթ, 20.000 հակագազ, 129.479 արկ, 2 ծովային կործանիչ՝ գումարած ոսկով և ռուբլով պարբերաբար տրամադրվող միլիոնների հասնող օգնությունը⁷⁸:

77 Նույն տեղում:

78 Տե՛ս **Հակոբյան Ա.**, Հայաստանի Հանրապետության ռազմաքաղաքական դրությունը 1920 թ., Եր., Պատմության ինստիտուտ, 1922, էջ 166-176:

Ոչ միայն Խորհրդային Ռուսաստանի, այլև Թուրքիայի աջակցությամբ 1920 թ. ապրիլի 28-ին Ադրբեջանում հաստատվում է խորհրդային իշխանություն: Երկու երկրների շահերն այսպես համընկնում էին նաև ամեն մի առիթով Հայաստանը հռչակելիս: Ապրիլի 30-ին Ադրբեջանի հեղկոմը վերջնագիր է ներկայացնում ՀՀ կառավարությանը՝ Ղարաբաղից և Զանգեզուրից դուրս բերելու Դրոյի ղեկավարած ուժերը:

1920 թ. ապրիլ-մայիս ամիսներին Չարենցք գրում է «Մարիոնետկա» բանաստեղծությունը (մարիոնետկա՝ «խաղատիկնիկ, խամաճիկ, փոխաբերաբար՝ ուրիշի ձեռքին խաղալիք դարձած անձ»): Կան նաև մարիոնետային պետություններ: Այստեղ մարիոնետկան սովերի պես երերուն, մահաշունչ անձնավորություն է, որ խորհրդանշում էր Հայաստանի ողբերգական դատապարտվածությունը: Հայոց պատմական բախտի ուրվականն է՝ անձնավորված որպես բանաստեղծի ճակատագիր: Գրված է աննկատ կուտակվող ներքին հզոր լարումը կշռույթի վերածող հազվադեպ հանդիպող քառույթյա յամբերով:

**Ու սո՛ւր ճչաց՝ կարծես բռնի
Աչքերն, անշարժ, հեռուն գամած.–
Այդպես հոգի՛ս պիտի մեռնի–
Կամա՛ց, կամա՛ց, կամա՛ց, կամա՛ց⁷⁹...**

Երկրի համար անկայուն և ծանր այս պայմաններում 1920 թ. մայիսի 1-ին Երևանում, Գյումրիում, Կարսում, Սարիղամիշում և այլուր ժողովուրդը դուրս էր եկել ցույցերի, փողոցներում հակակառավարական հանրահավաքներ էին ու կոչեր: Չարենցք Աբովյանով իջնող զանգվածի հետ էր և ներշնչված էր այդ տարերքով... Ցուցարարները պահանջում էին իշխող վարչակարգի տապալում և խորհրդային իշխանության հաստատում: 1920 թ. մայիսի 10-12-ին ապստամբությունը թափ է հավաքում Կարսում: Այն ճնշվում է, ծայր են առնում քաղաքացիական եղբայրասպան բախումներ, որոնք էլ ջլատում են ներքին միասնությունը:

Չարենցք ևս հայտնվում է անբարեհույսների շարքերում, հետապնդվում և զգուշանում խուզարկությունից: Այդ օրերի տենդն ար-

79 Չարենց Ե., Երկերի ժողովածու, հատ. 1, էջ 318:

տահայտվել է գրական բազմաթիվ գործերում՝ «Վահան Տերյանի հիշատակին», «Մահվան տեսիլ», «Աստղիկ»: 1920 թ. ավարտել է «Ողջակիզվող կրակ» շարքի «Առավոտ» ենթաշարքը, սկսել «Տաղարան»-ը, որը պիտի ավարտվեր «Հայաստանին» և «Ես իմ անուշ Հայաստանի...» գործերով: Մայիսյան ցույցերի արձագանքը կա նաև «Չարենց նամե»-ի XX գլխում:

Այս պայմաններում 1920 թ. հունիսի 1-ին Չարենցը «Խնդիր»-ով դիմում է հանրային կրթության և արվեստի նախարարին՝ ազատվելու հատուկ հանձնարարությունների կոմիսարի պաշտոնից: 1920 թ. փետրվարի 3-ին նրան տրվել էր վկայական, ըստ որի՝ հունվարի 1-ից վարում էր հատուկ հանձնարարությունների կոմիսարի պաշտոնը⁸⁰: Ակնհայտ է, որ պատճառը քաղաքացիական անվտանգությունն էր, որովհետև որպես կոմունիստ մասնակցել էր մայիսյան ցույցին, անգամ ենթարկվել հետապնդումների: Ազատման հրամանը հունիսի 4-ին (թիվ 126) ստորագրել է մայիսի 16-ից նախարարի պաշտոնում Ն. Աղբալյանին փոխարինած Գևորգ Ղազարյանը: Ըստ այդմ՝ հունիսի 1-ից, «համաձայն իր խնդրի», Չարենցն ազատվել է պաշտոնից⁸¹:

Ըստ «Համառոտ կենսագրության»՝ 1920 թ. հունիս-նոյեմբեր ամիսներին Չարենցն աշխատել է Երևանի մանկատներում որպես ուսուցիչ: Ըստ 1923 թ. օգոստոսի 11-ի հարցաթերթիկի՝ «1919 / VII - 1920 / XII, 1 տարի 5 ամիս» որպես ուսուցիչ աշխատել է Երևանի Ամերկումի ուսումնարանում⁸²:

Նախարարությունից ազատվելուց հետո Օհան Կարոյի միջնորդությամբ երկրորդ որբանոցում նրան աշխատանքի է տեղավորել Նշան Հովհաննիսյանը, որը հետագայում հանդես է եկել «Եղիշե Չարենց: Անձնական հանդիպումներ» հուշագրությամբ. «Չարենցն ալ «դաստիարակ» եղավ Վեբելեվսկայա փողոցի որբանոցին մեջ, ուր էր նաև մեր բնակարանը»⁸³: Դաստիարակ լինելուն զուգահեռ՝ Չարենցը մայրենիի և աշխարհագրության ուսուցիչ էր Երևանի ամերիկյան երրորդ մանկատան դպրոցում: Որբերի տրամադրությունը փոքր-ինչ բարձրացնելու համար դասամիջոցներին բակում նրանց հետ շուրջպար էր բռնում:

80 Տե՛ս **Չարենց Ե.**, Գիրք մնացորդաց, էջ 436:

81 Տե՛ս Նույն տեղում, էջ 195:

82 Նույն տեղում, էջ 287:

83 **Հովհաննիսյան Ն.**, Եղիշե Չարենց: Անձնական հանդիպումներ, «Ծիածան», Եր., 1939, N 2, էջ 24:

Հերթական աշխատավարձն ստանալուց հետո իր գրվածքներով հետաքրքրված մանկատան սաներին՝ Հենրի Գաբրիելյան, Գևորգ Պարիս (Պարոնիկյան), Հովհաննես Կանտոյան, Չարենցը հրավիրել է «Ֆրանսիա» պանդոկ՝ ընթրիքի: Այդ մանկատանն էին նաև Խորեն Աձենյանը (Ռադիո) և Ադո Ադոյանը: Չարենցը նրանց հետ անցկացնում էր գրական պարապմունքներ, քննարկում Հակոբ Հակոբյանի և Գառնիկ Քալաշյանի գործերը: «Իր ստեղծագործությունները Չարենցը մեզ չէր կարդում՝ հավանաբար զգուշանալով բոլշևիկյան քարոզչության մեղադրանքից...»⁸⁴:

Պատերազմի ժամանակ որբերին տարել են «ցեյխաուզներ՝ ռազմաձակատի համար փանփուշտներ մաքրելու»⁸⁵: Ահա այդ օրերի մի վկայություն (Արշալույս Ջանիկյան). «Ես բախտ եմ ունեցել Չարենցի հետ ուսուցիչ լինելու, նրա հետ ապրելու 1920 թվականի խառնաշփոթ, ողբերգական օրերը:

Դպրոցը՝ կազմակերպված Երևանի հիվանդ երեխաների ամերիկյան մանկատանը կից, բաղկացած էր երեք դասարանից, հետևյալ ուսուցչական կազմով. երրորդ դասարանի դաստիարակ-ուսուցիչ Եղիշե Չարենց, երկրորդ դասարանի ուսուցչուհի Արփիկ Աստվածատրյան (հետագայում՝ Չարենց), առաջին դասարանում՝ ես:

Բանաստեղծ Չարենցը դարձել էր ուսուցիչ և որբանոցի կիսաքաղց երեխաներին հայոց լեզու, թվաբանություն էր սովորեցնում սնվելով մանկատան խղձուկ սնունդով, և միշտ համոզված, որ դա ժամանակավոր երևույթ է:

Որբանոցի կառավարչուհին՝ Լուսնթագ Խանիկյանը, գնահատելով Չարենցի արժանիքները, հնարավորություն էր ստեղծել, որ նա կարողանա նաև ստեղծագործել, գրել. որբանոցում նրա համար առանձնացրել էր մի փոքր սենյակ»⁸⁶: Այլևայլ գործերի հետ այդ սենյակում է ծնունդ առել նաև «Ես իմ անուշ Հայաստանի արևահամ բառն եմ սիրում» տաղը: Արփիկը, Արշալույսը և Լուսնթագը բանաստեղծի նոր գործերի առաջին ունկնդիրներն էին: Նրանց համար Չարենցը ձեռքերի թափահարումներով, օրորումներով արտասանել է նաև Տերյան. «Հետո մոայլվում էր, նյարդայնանում, ուզում էր մի բան

84 **Խորեն Ռադիո**, Չարենցը որպես բանաստեղծ և անհատականություն, «Հայոց լեզու և գրականություն», Եր., 2017, N 3, էջ 46:

85 Նույն տեղում:

86 Նույն տեղում:

ջարդել: Մի անգամ, հիշում եմ, ձեռքից գցեց բաժակը, կոտրեց, հետո գղջաց, խաղաղվեց, ժպտաց մանկան անմեղությամբ»⁸⁷:

Ջանիկյանը վկայում է, որ Չարենցը պատմում էր Կարսի կյանքից, հիշում բերդը, գետը...

6. Ռադիոկայան և ռադիոպոեմ

1920 թ. հունիսին Քանաքեռի բարձունքում սարքավորումներով համալրվում է Երևանի ռադիոկայանը. «Իտալական թագավորական շտաբի գնդապետ Գաբբունի հունիսի 7-ին 13 արկղ իրեր ստացավ՝ Երևանում հիմնվող նոր ռադիոկայանի համար»⁸⁸: Ռադիոկայանը կառուցվել էր նախորդ տարի. «Նույն [1919 թ.] հոկտեմբերին արդեն վերջացել էր կառուցումը Երևանի ուժեղ ռադիոկայանի, որ գործում էր մինչև Բասրա, Թաշքենդ ու Հաշտարխան»⁸⁹:

Երևանի նորակառույց հզոր ռադիոկայանը կենդանի ռադիոկայան է դառնում նաև Չարենցի պոեզիայի համար: Սրանք ամենևին պատահական զուգադիպություններ չէին: Եվ իզուր չէր Չարենցն աշխարհով մեկ աղաղակում.

**Ռադիոկայան է իմ հոգին հիմա
Ամբողջ աշխարհի ու մարդկանց հանդեպ.
Ու բա՛րձր է, բա՛րձր է կայանն իմ հոգու՝
Մասիսի նման բա՛րձր է ու հաստատ –
Հզո՛ր, ահարկո՛ւ⁹⁰:**

Այնքան նշանակալից էր ռադիոյի մուտքը Հայաստան, որ անգամ Մահարու եղբայրը՝ Խորեն Աձեմյանը, ընդունել է Խորեն Ռադիո գրական անունը: Չարենցը հեգնել է, խորհուրդ տվել փոխել: Ապարդյուն. ռադիոպոեմ կլինի՞, Խորեն Ռադիո չէ՞...

Խորհրդարանի դահլիճում 1920 թ. հունիսի 6-ին Ն. Աղբալյանը հանդես է գալիս «Հայ գրականության ապագայի մասին» զեկուցմամբ: Հայ գրականության գալիք օրվա համար մտահոգությունն օրա-

87 «Հուշեր Եղիշե Չարենցի մասին», էջ 112:

88 «Մշակ», 1920, 8 յունիսի, N 120:

89 Վրացյան Ա., նշվ. աշխ., էջ 353:

90 Չարենց Ե., Երկերի ժողովածու, հատ. 2, էջ 100:

խնդիր հարց էր, որ, Տերյանից ու Աղբալյանից բացի, եղեռնից առաջ «Վաղվան գրականություն» կարգախոսով արժարժում էին նաև արևմտահայ գրողները: Այդ գալիք օրը նրա համար վերստին Չարենցն էր: Եվ ահա նրա հովանավորությամբ 1920 թ. հունիսին Երևանում լույս է տեսնում Չարենցի «Բոլորին, բոլորին, բոլորին (Երեք ռադիոպոեմ)» գիրքը (14 էջ), որում զետեղված են «Նայիրի երկրից», «Դեպի ապագան» և «Բրոնզե թները կարմիր գալիքի» ռադիոպոեմները (թվագրված 1920 թ. մարտ-հունիս ամիսներով):

Հոկտեմբերյան հեղափոխության լուրը Սնուկից աշխարհում տարածվեց հենց այդ կոչով՝ «Всем! Всем! Всем!»: Ըստ Մահարու՝ գիրքը պայթեց ռումբի պես⁹¹: Պոեմները Խանջանն արտագրել է իր ծոցատետրի մեջ: Չարենցն այդ գրքով կերտում է իր պատմական կերպարը և այդուհետ դառնում իր օրերի պատմիչ.

**Ե՛ս – Ե՛ս եմ նորից.–
Դարերից եկած անհո՛ւն մի պոետ–
Եղիշե Չարենց–
Նայիրի երկի՛ր, քո երգիչը վառ,
Օրհներգուն պայծառ
Ու զավակը մեծ...
Ե՛ս – Ե՛ս եմ նորից.–
Ոսկի երակը հրնամյա ցեղիս,
Իմ ջլաբազուկ, հաղթ ժողովրդի
Օղակը վերջին⁹²:**

Գրքի վերջին էջում զետեղված է Չարենցի հրատարակած և հրատարակելիք գրքերի ցանկը: Ըստ ծանուցման՝ «Ողջակիզվող կրակ. Բանաստեղծություններ» գիրքը պետք է լույս տեսներ Թիֆլիսում, «Պատրաստ են հրատարակության»՝ «Էմալե պրոֆիլը Ձեր. գալանտ երգեր», «Մարդերգություն. պոեմներ մարդու մասին», «Ազգային երազ. սատիրական պոեմ»: «Ողջակիզվող կրակ», «Էմալե պրոֆիլը Ձեր» շարքերը և «Ազգային երազ» պոեմն առանձին լույս չտեսան, սպագրվեցին «Երկերի ժողովածու»-ում (1922): «Մարդերգություն.

91 Տե՛ս Մահարի Գ., Երկերի ժողովածու, հատ. 2, Եր., «Հայաստան», 1968, էջ 405:
92 Չարենց Ե., Երկերի ժողովածու, հատ. 2, էջ 98-99:

պոեմներ մարդու մասին» գրքի բովանդակությունն անհայտ է: Հիշեցնենք, որ «Մարդերգություն» վերնագրով պոեմ 1909 թ. գրել է Ռուբեն Սևակը:

Չարենցը նախատեսել էր նաև «Գազելների գիրքը» («Մոռս համար գազել»-ը «Հայաստանի կոոպերացիա»-ի 1920 թ. 12-րդ համարում տպագրվել է «Գազելների գրքից (Մոռս համար գազել)» վերտառությամբ) և «Բրոնզե գիրքը» («Աստղիկ»-ը «Հայաստանի կոոպերացիա»-ի 1920 թ. 17-րդ համարում տպագրվել է «Բրոնզե գրքից» հղումով): Գազելներ գրել էր, իսկ «Բրոնզե գրքում» ենթադրաբար կարող էր ներառվել «Ողջակիզվող կրակ» շարքի «Առավոտ» ենթաշարքը, գուցեև «Ութնյակներ արևին» շարքը:

Լույս է տեսնում Դավիթ Անանունի «Կույր տարերքը (Եղիշե Չարենց՝ «Բոլորին, բոլորին, բոլորին», Երեք ռադիոպոեմ)» գրախոսությունը, որում Չարենցի հեղափոխական ոգևորությունը գրախոսը համարում է կույր տարերքի արտահայտություն⁹³:

Ստեղծագործական բուռն տարերքի մեջ Չարենցը 1920 թ. ամռանն ավարտում է «Ողջակիզվող կրակ» շարքը: Այն բաղկացած է երեք ենթաշարքից՝ «Իրիկուն» (գրել է 1918 թ. փետրվար-մարտ ամիսներին Թիֆլիսում, ներառում է 18 գործ), «Վերադարձ» (գրել է 1918 թ. հուլիսին Հյուսիսային Կովկասում, քառամաս 104-տողանոց գործ է), «Առավոտ» (գրել է 1919-1920 թթ. Կարսում և Երևանում, ներառում է 22 գործ): Շարքն ամբողջությամբ տպագրվել է «Երկերի ժողովածու»-ի 1-ին հատորում (Եր., 1922):

Իր նկատմամբ առաջացած կասկածների պատճառով 1920 թ. օգոստոսի 5-ին Չարենցը նամակ է հղում կառավարության նախագահ և արտաքին գործոց նախարար Համո Օհանջանյանին՝ կանխելու իր դեմ հերյուրված զրպարտությունը, թե ինքը իբր սադրել է 13-րդ որբանոցի ավագ որբերին չենթարկվելու իշխանությունների հրահանգներին, ինչի համար փնտրում են իրեն, որպեսզի ձերբակալեն: Նաև հայտնում էր, որ վերջին շրջանում ծանր հիվանդ էր՝ 39,9 աստիճան բարձր ջերմությամբ, և հիմնականում տանն էր՝ գամված անկողնուն⁹⁴:

Այդ վիճակը շարունակվել է. 1920 թ. սեպտեմբերին Չարենցը դիմել է Կարինե Քոթանջյանին, խնդրել թաքցնել իր ձեռագրերի կապո-

93 Տե՛ս «Հայաստանի կոոպերացիա», 1920, 15 օգոստոսի, N 15:

94 Տե՛ս **Չարենց Ե.**, Անտիպ և չհավաքված երկեր, Եր., ՊԱ հրատ., 1983, էջ 452-453:

ցը, քանի որ իրեն հետևում էին. «1920 թ. սեպտեմբերին էր թե հոկտեմբերին, Եղիշեն, կարծեմ, արդեն վաղուց խզել էր կապերը այն մարդկանց հետ, որոնցից դրան էր ստանում (նկատի ունի աշխատանքը կրթության և արվեստի նախարարությունում – Դ. Գ.): Մեկ օր ահա նա գալիս է որբանոց իր ողջ գրականությունը հավաքած. «Կարինե՛, խնդրում եմ պահիր սրանք, ինձ հետևում են»»: Կարինեի պատմելով՝ իբր դրա համար Ամերկյանի գրասենյակում Չարենցին խիստ դիտողություն է արել դաշնակցության կոմիտեի քարտուղար դոկտոր Ռուբենը. «Բոլշևիկյան որջ ես դարձրել որբանոցը. Չարենց...»⁹⁵:

7. Աղետալի օրեր

1920 թ. սեպտեմբերի 28-ին վերսկսվում են թուրքական արշավանքները, որոնք նոր թափ են առնում հոկտեմբերին՝ Կարսի ամրակալի պարտությունից հետո ճանապարհ բացելով դեպի Գյումրի:

Սեպտեմբերի 30-ին և հոկտեմբերի 2-ին դասալիքների մասին ընդունվում են խիստ որոշումներ՝ մահապատիժ, դասալիքներին թաքցնողների համար սահմանվում է մինչև կես տարի կալանք, արգելվում է նրանց աշխատանքի ընդունել: Կարսի անկման նախօրյակին կախաղան են հանվում շիրակցի չորս դասալիքներ:

1920 թ. հոկտեմբերի 6-ին Երևանում Չարենցը գրում է «Մահվան տեսիլ» եղերերգը⁹⁶: Չարենցի խոսքը տրոփում էր հայրենիքի պատմաքաղաքական իրադարձությունների շնչառությամբ, որի վառ վկայությունը «Մահվան տեսիլ» եղերերգն է: Իրական են և՛ կախաղանի պատկերները, որ դասալիքներին պատժելու համար դրված էր Երևանի ու Կարսի հրապարակներում, և՛ վերջին գոհի զգացողությունը:

Դասալիքներին պատժելու համար պատրաստված կախաղանների մասին վկայությունները շատ են: Դրանց մասին «Հայաստանի Հանրապետություն» աշխատության մեջ գրում է նաև Ս. Վրացյանը: Ահա և Մահարին. «Ռուսական եկեղեցու հետևը՝ քաղաքային բուլվարի մոտ երեկ կանգնեցրին մի կախաղան: Այսօր լույս տեսավ Չարենցի մի ցնցող բանաստեղծությունը՝ «Կախաղանը» վերնագրով: Ոչ ոք թող չմոտենա կախաղանին, ես կբարձրանամ կախաղան, և թող բոլորը

95 «Հուշեր Եղիշե Չարենցի մասին», էջ 46-47:

96 Տե՛ս **Չարենց Ե.**, Երկերի ժողովածու, հատ. 1, Սուկվա, 1922: Այս հատորում «Մահվան տեսիլ»-ը տպագրվել է «Սիրելի Դավիթ Անանունին» ընծայականով:

նայնն սառած աչքերիս և այնտեղ տեսնեն, ի՛մ հայրենիք, քո ապագան»⁹⁷:

«Որպես լքված թավջութակի ձգված մի լար»։ Սայաթ-Նովայի քամանչայից, Ջիվանու սազից հետո ջութակը՝ որպես պատկերի բաղադրիչ, Տերյանը ներմուծեց: Մինչ այս բանաստեղծությունը Չարենցը երկու տեղ օգտագործել է այն: Իսկ այստեղ ջութակը (թավջութակ) ձգված մի լար է, որի պես «Դողում է սիրտս կարոտով մի ահարկու»։ Չարենցի համար ազգային կյանքի հոգեբանական լարվածությունը վերածվեց ողբերգության, մինչդեռ Տերյանի քնարերգության մեջ մնաց հոգին կեղեքող թախիծ. «Չըզհտեն որտեղի՛ց է գալիս // Ջութակի հեկեկանքը տրտում // Եվ լալիս է անվերջ ու լալիս // Եվ անվերջ ծավալվում իմ սրտում» («Աշնան գիշեր»)⁹⁸:

«Մահվան տեսիլ»-ում հնչում են նաև Տերյանի «Երկիր Նաիրի» շարքի արձագանքները. «Մշուշի միջից,- տեսի՛լ դյութական,- // Բացվում է կրկին Նաիրին տրտում»⁹⁹: Դյութական տեսիլքն այստեղ դարձել է մահվան տեսիլ. ցնորքի մշուշների խորքում իրական երկիրն էր:

Չարենցի ինչպես այս, այնպես էլ շատ այլ գործեր աչքի են ընկնում պատկերների կերտման նկարչականությամբ: Այդ առնչությամբ Միքայել Մազմանյանը գրում է. ««Դանթեական առասպել»-ում նկարագրված պատերազմի արհավիրքներն իսպանական մեծ նկարիչ Ֆրանսիսկո Գոյայի օֆորտներն են հիշեցնում իրենց արտահայտչականությամբ: Իսկ «Մահվան տեսիլը» կարդալիս՝ Հիերոնիմ Բոսխի ձիվաղային մո՞ծավանջներն են առաջդ կանգնում»¹⁰⁰:

Չարենցը վերջնականապես հաստատեց «Կապուտայա հայրենիք»-ից եկող, բոլորին հասցեագրված ռադիոպոեմներում շարունակվող, փորձության ժամին հաստատված ապրումակցությունը՝ հայրենիքի և բանաստեղծի ձակատագրերի միասնությունը:

Հայ բոլշևիկները, ինչպես Կարսում, այնպես էլ Ալեքսանդրապոլում ազգային դավաճանի դեր են ստանձնում: Նոյեմբերի 13-ին կազմակերպվում է ՌԿ(Բ)Կ Ալեքսանդրապոլի կոմիտեի հանրահավաք, և ընդունվում ինքնասպանության համարժեք բանաձև. «Ալեքսանդրապոլի պրոլետարիատը և չքավոր գյուղացիությունը, ազատագրվելով

97 Մահարի Գ., նշվ. աշխ., էջ 406:

98 Տերյան Վ., Երկերի ժողովածու, հատ. 1, Եր., «Հայաստան», 1972, էջ 118:

99 Նույն տեղում, էջ 244:

100 «Հիշողություններ Եղիշե Չարենցի մասին», էջ 85:

30-ին Հայաստանի հեղկոմը (նախագահ՝ Ս. Կապյան) «Բոլորին, բոլորին, բոլորին» կոչով Հայաստանը հռչակում է Խորհրդային Սոցիալիստական Հանրապետություն: Դեկտեմբերի 2-ին Հայաստանում հաստատվում է խորհրդային իշխանություն:

Հետագա դեպքերին Չարենցը ներկա էր: Դեկտեմբերի 5-ին լույս է տեսնում Խորհրդային Հայաստանի պաշտոնաթերթ «Կոմունիստ» օրաթերթի առաջին համարը: Թերթի խմբագիր Աշոտ Հովհաննիսյանը Չարենցին հրավիրում է աշխատակցության: 1921 թ. մայիսից օրաթերթը վերանվանվում է «Խորհրդային Հայաստան»:

Հեղկոմի դեկտեմբերի 6-ի հրամանագրով Խորհրդային Հայաստանի սահմաններում հայերենը հռչակվում է պետական լեզու, իսկ մուսուլմանական ազգաբնակչության շրջանում՝ հայերենի հետ նաև թուրքերենը:

Դեկտեմբերի 15-ին Չարենցը նշանակվում է ՀԽՍՀ լուսավորության ժողովրդական կոմիսարիատի արվեստի բաժնի վարիչ և կոլեգիայի անդամ: Նշանակման հրամանն ստորագրել է լուսժողկոմ Աշոտ Հովհաննիսյանը: Այդ պաշտոնը նա վարում է մինչև 1921 թ. հունիս¹⁰⁴:

Եզրակացություններ

1917 թ. ռուսական հեղափոխությունը փոխեց տարածաշրջանի ռազմաքաղաքական իրադրությունը: 1918 թ. մայիսի 28-ին հռչակվեց Հայաստանի Հանրապետությունը՝ ժառանգություն ստանալով լքվող ռազմաձևատր և թուրքական կրկնվող հարձակումների վտանգը: Փոխվեց պատմական իրականության նկատմամբ ժողովրդի հայացքը: Այս ամենն իր ողջ ընդգրկմամբ և խորությամբ արտացոլվեց Եղիշե Չարենցի ստեղծագործության մեջ: Նա ընդունեց հեղափոխությունը և, լինելով հայրենիքի գինվոր ու հայրենիքով ապրող բանաստեղծ, փորձեց համատեղել հեղափոխությունը, հայրենիքը և պետականությունը:

Սա Չարենցի ստեղծագործության հետխորհրդապաշտական նոր շրջանն է, որն այլ կերպ բնորոշվում է որպես հեղափոխական ռոմանտիզմի շրջան: Ստեղծագործական առումով արտակարգ բեղուն տա-

104 1923 թ. օգոստոսի 11-ի հարցաթերթիկում Չարենցը նշել է հուլիս ամիսը (տես **Չարենց Ե.**, Գիրք մնացորդաց, էջ 287):

րիներ, երբ հրատարակեց բազմաթիվ պոեմներ, գրեց շարքեր, որոնցից մամուլում տպագրեց առանձին բանաստեղծություններ՝ ամբողջությամբ հրատարակելով 1922 թ. մոսկովյան երկհատորյակում:

«Սոմա» և «Ամբոխները խելագարված» պոեմներում Չարենցը պայմանական ձևերով ողջունեց պատմական շրջադարձը՝ հայոց պետականության վերականգնումը, ռադիկալներում ոգեշնչեց փլատակներից հայրենիք կերտողներին, անդրադարձներով քննեց ու բացահայտեց ռուս-թուրքական դաշինքի հակահայկական էությունը:

Չարենցի ստեղծագործության հանդեպ դեռևս 1917 թվականից ուշադիր էր մեծանուն ազգային գործիչ Նիկոլ Աղբալյանը, որն էլ 1918 թ. հոկտեմբերին Հայ գրողների ընկերության երկրորդ նիստում հռչակեց նրա անունը՝ «Մի նոր բանաստեղծ՝ Եղիշե Չարենց»:

Չարենցի քաղաքական հայացքների ելակետը հայրենիքը ծանր վիճակից դուրս բերելու խնդիրն էր, ինչն էլ նրան ստիպեց գրել «Ողջակիզվող կրակ» շարքի «Առավոտ» ենթաշարքի այս բարդ բանաստեղծությունը.

**Ինչպես երկիրս անսփռի, ինչպես երկիրս բախտագուրկ,
Ինչպես երկիրս ավերակ ու արնաներկ–
Մխում է սիրտս հիմա որբ, մխում է սիրտս բախտագուրկ,
Մխում է սիրտս՝ ավերակ ու արնաներկ...**

**Եվ այս երգերը իմ կարմիր, ախ այս երգերը իմ կարմիր,
Որ երգում է անսփռի սիրտս կրակուն–
Ինչպե՛ս արդյոք պիտի հնչեն, ախ, այս երգերը իմ կարմիր–
Իմ ավերակ, իմ ո՛րբ երկրում...**

**Ինչպես երկիրս անսփռի, ինչպես երկիրս ավերակ–
Այնպես էլ սիրտս – անսփռի, այնպես էլ սիրտս – անուրախ,
Վե՛րք է դառնում սրտիս խորքում, օրերի փայլը այս հրակ–
Ախ, սի՛րտ իմ՝ բորբ ու անսփռի,– երկի՛ր իմ՝ ո՛րբ ու անուրախ¹⁰⁵ ...**

Այս անգործության հասնող անհուսության զգացումը, ի վերջո, նրան տարավ 1920 թ. մայիսյան ցույցի ելածների շարքերը: Այսինքն՝

105 Չարենց Ե., Երկերի ժողովածու, հատ. 1, էջ 167:

Չարենցը միացավ բոլշևիկներին, իսկ 1921 թ. Փետրվարյան ապստամբությունից հետո բոլշևիկյան ուժերի շարքերում Արտաշատի դիրքերում գեներլ ձեռքին կռվեց ապստամբ դաշնակցականների դեմ:

Չարենցի հիասթափությունն իր բոլշևիկյան խանդավառությունից պիտի սկսվեր 1927 թվականից և, գաղափարապես աստիճանաբար խորանալով, դառնար մեծ ընդդիմություն, որ պիտի արտահայտվեր «Գիրք ճանապարհի» ժողովածուում, 1935–1937 թթ. անտիպ ժառանգության և ազատ գործունեության մեջ: Այս ճանապարհին նա հիրավի պետք է դառնար հայրենի հանձար և իր նպաստը բերեր ազգային կյանքի կառուցման գործում:

Դավիթ Վ. Գասպարյան – հեղինակ է առավելապես նորագույն շրջանի հայ գրականությանը նվիրված մենագրությունների, տեսական ու գրապատմական տասնյակ գրքերի, հոդվածների ժողովածուների, գրական–քննադատական հարյուրավոր հոդվածների, ինչպես նաև դպրոցական գործող դասագրքերի ու մեթոդական ձեռնարկների:

Էլ. հասցե՝ grakanagetgasparyan@mail.ru

Summary

YEGHISHE CHAREHTS DURING THE YEARS OF THE FIRST REPUBLIC OF ARMENIA

David V. Gasparyan

Doctor of Sciences in Philology

Key words – Nikol Aghbalyan, Armenuhi Tigranyan, Kars, "Soma", "Frenzied Masses", radio poems.

The Russian Revolution of 1917 completely changed the military-political reality of the region. On May 28, 1918, the Republic of Armenia was proclaimed, and the leaders of the newly established state did the utmost to build a new statehood. The patriotic spirit pervaded Charents. He was the soldier of his motherland; he volunteered to fight in Erzurum and at the same time he was a devoted poet. With that enthusiasm, he wrote

"Soma" and Frenzied Masses ", radiopoems, separate poetic series and poems.

In 1919 under the leadership of the minister of education Nikol Aghbalyan a number of serious events in the literary and cultural arena were organized. An Armenian literary company was established; the "Pandok" literary faction appeared and began to develop.

In 1917 during the second meeting of the Armenian Literary Company Charents was brought to the attention of Nikol Aghbalyan. Charents was proclaimed as a new author after Teryan. At that time in 1920 Charents was teaching in Kars in Bashkyadlar village. On January 26, Charents began to work at the ministry under the leadership of Agbalyan.

In 1920 seeing the political prospects of the new Armenia in the ranks of the Bolsheviks, Charents joined the participants of the May uprising. However, after the Sovietization of Armenia, his disappointment with the consequences of the country's Bolsheviks gradually deepened and strengthened. After 1927 Charents he continued his poetic mission in a new way for which he was accused of and condemned as a nationalist in 1937.

The period preceding the First Republic (1915-1917) Charents served the motherland not only with a pen, but also with a weapon. This dedication was the moral basis that he could see himself as the golden vein of the ancient people and serve the motherland not only by the example of his personal life, but also by the entire work of 1918-1920.

The disappointment from the consequences of the country's Bolshchevism led Charents to raise the high title of the national poet to a new level with his pen.

ЕГИШЕ ЧАРЕНЦ В ГОДЫ ПЕРВОЙ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

Давид В. Гаспарян

Доктор фил. наук

Ключевые слова – Никол Агбалян, Арменуи Тигранян, Карс, «Сома», «Неистовые толпы», радиопэмы.

Русская революция 1917 г. полностью изменила военно-политические реальности региона. 28 мая 1918 г. была провозглашена Республика Армения, лидеры которой сделали все, чтобы построить независимое государство.

Чаренц проникся патриотическим духом. Он с оружием в руках пошел добровольцем сражаться в Эрзеруме и стал преданным своей стране поэтом. С энтузиазмом он писал поэмы «Сома», «Неистовые толпы», радиопэмы, отдельные поэтические циклы и стихи.

В 1919 г. под руководством министра просвещения РА Никола Агбаляна проводились серьезные литературные и культурные мероприятия. Было создано Армянское литературное товарищество, появилась и стала активно развиваться литературная группа «Пандок». Еще в 1917 г. Чаренц попал в поле зрения Никола Агбаляна. Позже его представили на втором заседании армянского литературного товарищества и провозгласили новым поэтом после Терьяна. Чаренц в то время учительствовал в Карсе в деревне Башкадклар. 26 января 1920 г. он был представлен Агбалян и начал работать в министерстве под его руководством.

В 1920 г. Чаренц, увидев политические перспективы новой Армении в рядах большевиков, присоединился к участникам Майского восстания. Но после советизации Армении его разочарование от последствий Октябрьской революции постепенно углублялось, укрепилось. А после 1927 г. Чаренц по-новому стал нести свой высокий титул национального поэта, из-за чего был обвинен и осужден как националист в 1937 году.

Таким образом в период, предшествующий Первой республике (1915-1917 гг.), Чаренц служил Родине не только пером, но и оружием. Эта самоотверженность была нравственной основой того, что он смог увидеть себя золотой жилой древнего народа. А в 1918-1920 гг. служил Родине не только примером своей личной жизни, но и всем своим творчеством. Окончательное разочарование от последствий Октябрьской революции после 1927 г. привело к тому, что Чаренц своим пером поднял на новый уровень высокий титул национального поэта.

REFERENCES

1. “Ashkhatank”, Yer., 1920, 27 noyemberi, N 68 (**In Armenian**).
2. “Ch‘arents‘i het: Husher”, hat. 1, Yer., 1997, hat. 2, Yer., 2008 (**In Armenian**).
3. “Garun”, Yer., 1968, N 9 (**In Armenian**).
4. “Gegharvest”, Yer., 1920, N 7 (**In Armenian**).
5. “Grakan t‘ert”, Yer., 1964, 25 septemberi, N 39 (**In Armenian**).
6. “Grakan-gegharvestakan almanakh”, T‘iflis, 1919, N 5 (**In Armenian**).
7. “Hayastani dzayn”, Yer., 1919, 19 hoktemberi, N 7, 30 hoktemberi, N 9, 7 noyemberi, N 10, 9 noyemberi, N 12 (**In Armenian**).
8. “Hayastani kooperats‘ia”, Yer., 1919, 15 yunvari, N 1, 15 mayisi, N 9, 15 ögostosi, N 15, 1920, 15 hoktemberi, N 16 (**In Armenian**).
9. “Hayots‘ lezu yev grakanut‘yun”, Yer., 2017, N 3 (**In Armenian**).
10. “Hayrenik” amsagir, Boston, 1952, N 12 (**In Armenian**).
11. “Hayrenik”, Boston, 1931, N 12 (**In Armenian**).
12. “Hishoghut‘yunner Yeghishe Ch‘arents‘i masin”, Yer., 1961 (**In Armenian**).
13. “Husher Yeghishe Ch‘arents‘i masin”, Yer., 1986 (**In Armenian**).
14. “Jahakir”, Pēyruť, 1963, N 12 (**In Armenian**).
15. “Karsi nahangapet S. Ghorghanyani husherē. Karsi maržē Hayastani Hanrapetut‘yan kazmum (1919, april – 1920, hoktember)”, Yer., 2018 (**In Armenian**).
16. “K‘ristonya Hayastan”, Ējmiatsin, 1918, mayis (**In Armenian**).
17. “Mshak”, T‘iflis, 1920, 7 marti, N 44, 8 yunisi, N 120 (**In Armenian**).
18. “Yařaj”, Yer., 1920, 29 yunvari, N 20, 7 pet‘rvari, N 28, 21 pet‘rvari, N 39, 24 pet‘rvari, N 40 (**In Armenian**).
19. “Zhoghovurd”, Yer., 1919, 3 yunvari, N 1, 22 hoktemberi, N 116 (**In Armenian**).
20. Aghbalyan N., Grakan-k‘nnadatakan yerker, Beyruť, 1959 (**In Armenian**).
21. Aharonyan A., Sardarapatits‘ minch‘ev Sevr yev Lozan. K‘aghak‘akan öragir, Post‘ēn, 1943 (**In Armenian**).
22. Aharonyan V., Levon Shant‘: Marde yev gortsē, Yer., 2019 (**In Armenian**).
23. Ananyan G., Yeghishe Ch‘arents‘, Yer., 1987 (**In Armenian**).
24. Ch‘arents‘ Ye., Amboghjakan gortsē, hat. A., Pēyruť, 1955 (**In Armenian**).
25. Ch‘arents‘ Ye., Antip yev ch‘havak‘vats yerker, Yer., 1983 (**In Armenian**).
26. Ch‘arents‘ Ye., Girk‘ mnats‘ordats‘, Yer., 2017 (**In Armenian**).
27. Ch‘arents‘ Ye., Soma, T‘iflis, 1918 (**In Armenian**).

28. **Ch'arents' Ye.**, Yerkeri zhoghovatsu, hat. 1, Moskva, 1922, hat. 2, Moskva, 1922 **(In Armenian)**.
29. **Ch'arents' Ye.**, Yerkeri zhoghovatsu, hat. 1, Yer., 1962, hat. 2, Yer., 1963, hat. 6, Yer., 1968 **(In Armenian)**.
30. **Gasparyan D.**, Hay grakanut'yun, hat. 6, Yer., 2017 **(In Armenian)**.
31. **Gasparyan D.**, Haykakan apagayapashtut'yun, Yer., 2009 **(In Armenian)**.
32. **Gasparyan D.**, Yeghishe Ch'arents'. Hayots' banasteghtsut'yan mayrak'aghak'ë, Yer., 1996 **(In Armenian)**.
33. **Gasparyan D.**, Yeghishe Ch'arents'i kyank'ë yev zhamanakë, Yer., 2022 **(In Armenian)**.
34. **Gorodets'ki S.**, Hayastani y-ev hay kulturayi masin, Yer., 1980 **(In Armenian)**.
35. Grakanut'yan yev arvesti t'angaran, Karen Mik'ayelyani fond, N 779, Yeghishe Ch'arents'i fond, N 245 **(In Armenian)**.
36. **Hakobyan A.**, Hayastani Hanrapetut'yan razmak'aghak'akan drut'yunë 1920 t'., Yer., 2022 **(In Armenian)**.
37. Hayastani azgayin arkhiv, f. 1022, ts'. 2, g. 189, t'. 1, 4010 (Mravyani f.), ts'. 1, g. 29, t'. 1 **(In Armenian)**.
38. **Karinyan A.**, Yeghishe Ch'arents', Yer., 1972 **(In Armenian)**.
39. **Khatisyan A.**, Hayastani Hanrapetut'yan tsagumn u zargats'umë, Beyrut', 1968 **(In Armenian)**.
40. **Mahari G.**, Yerkeri zhoghovatsu, hat. 2, Yer., 1968 **(In Armenian)**.
41. **Mnats'akanyan A.**, Hay zhoghovrdi voghbergut'yunë, Yer., 1965 **(In Armenian)**.
42. Shiraki hayagitakan hetazotut'yunneri kentron, gitakan ashkhatank'neri zhoghovatsu, Gyumri, 2020 **(In Armenian)**.
43. **Teryan V.**, Yerkeri zhoghovatsu, hat. 1, Yer., 1972, hat. 4, Yer., 1979 **(In Armenian)**.
44. **Tigranyan-Aharonyan A.**, Banasteghtsut'yunner, Beyrut', 1969 **(In Armenian)**.
45. **T'umanyan H.**, Yerkeri zhoghovatsu, hat. 10, Yer., 1999 **(In Armenian)**.
46. **T'umanyan N.**, Husher yev zruyts'ner, Yer., 1987 **(In Armenian)**.
47. **Vrats'yan S.**, Hayastani Hanrapetut'yun, T'ehran, 1982 **(In Armenian)**.
48. **Zak'aryan A.**, Yeghishe Ch'arents', hat. 1, Yer., 1997 **(In Armenian)**.
49. **Zoryan S.**, Yerkeri zhoghovatsu, hat. 2, Yer., 1985 **(In Armenian)**.